

MUNETIK

Nr 4/2025(12)

ISSN 2956-5995



ՄՈՒՆԵՏԻԿ

CZASOPISMO MNIEJSZOŚCI ORMIAŃSKIEJ

Հայ-լեհական հասարակական հոգևոր-կրթամշակութային վերլուծական հանդես



ANDRZEJ PISOWICZ

polski armenista
i iranista

ԱՆԳԵՅ ՊԻՍՈՎԻՉ

լեհ հայագետ
և իրանագետ

ԾՆԵՂՅԱՆ **85** -ԱՄՅԱԿ
. ROCZNICA URODZIN

www.munetik.pl



”

• (...) Po wspomnianym artykule opublikowanym z Wartanem Grigorianem, który był moim debiutem zainteresowałem się dialektologią ormiańską. Wzięło się to stąd, że kiedy uczyłem się języka literackiego wschodnioormiańskiego zauważyłem, że ludzie w mowie potocznej mówią znacznie inaczej. Jak się dowiedziałem mówili oni tzw. dialektem erywańskim. (...)

• Jak się dowiedziałem w Armenii jest około pięćdziesięciu dialektów, to mnie bardzo zaintrygowało i stało się moją specjalnością naukową. (...)

• Wyniki moich badań o dialekcie z Kut zaprezentowałem na konferencji armenistycznej w Filadelfii w 1979 roku. Aktualnie dialekt ten jest wymarły, bo nie ma już nikogo, kto by się nim posługiwał. (...)

• Pod koniec lat dziewięćdziesiątych w rozmowie z moimi przełożonymi na uniwersytecie omawialiśmy temat mojej profesury. Zaproponowałem wówczas opracowanie gramatyki języka ormiańskiego. (...) W książce opisałem strukturę gramatyczną grabaru oraz współczesnego języka ormiańskiego we wschodniej i zachodniej wersji. Książkę dedykowałem Ormianom polskim z okazji 1700-lecia chrztu Armenii.

Profesor ANDRZEJ PISOWICZ

•...Հիշյալ հոդվածի հրապարակումից հետո, որը պատրաստել էի Վարդան Գրիգորյանի հետ, իմ գիտական դեբյուտն էր, որից հետո ես սկսեցի հետաքրքրվել հայերենի բարբառագիտությամբ: Առիթ հանդիսացավ այն, որ արևելահայ գրական լեզուն ուսումնասիրելիս նկատեցի. առօրյա խոսքում մարդիկ զգալիորեն այլ կերպ են արտահայտվում: Հետագայում պարզվեց, որ նրանք խոսում էին, այսպես կոչված, երևանյան բարբառով...

• Ավելի ուշ իմացա, որ Հայաստանում գոյություն ունի մոտ հիսուն բարբառ: Այս փաստը ինձ խիստ հետաքրքրեց և ժամանակի ընթացքում դարձավ իմ հիմնական գիտական մասնագիտացումը...

• Իմ ուսումնասիրությունների արդյունքները Կուտի բարբառի վերաբերյալ Ներկայացրեցի 1979 թվականին Ֆիլադելֆիայում անցկացված հայագիտական համաժողովում: Ներկայումս այդ բարբառը համարվում է վերացած, քանի որ այլևս չկա որևէ մեկը, ով կխոսեր կամ կօգտագործեր այն: (Խմբ. Նշում՝ Կուտին պատմական քաղաք էր Լեհաստանի հանրապետությունում, ներկայումս գտնվում է Ուկրաինայի տարածքում, Պոկուտյե պատմական շրջանում)...

• Ինստիտուտական թվականների վերջին, համալսարանում իմ դեկավարների հետ ունեցած զրույցների ընթացքում քննարկվում էր իմ պրոֆեսորի կոչման հարցը: Այդ ժամանակ առաջարկեցի աշխատել հայերենի քերականության վրա... Գրքում ներկայացրել եմ գրաբարի, ինչպես նաև ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքը՝ արևելահայ և արևմտահայ տարբերակներով: Գիրքը նվիրել եմ Լեհաստանի հայերին՝ Հայաստանի քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առթիվ:

Պրոֆեսոր ԱՆՋԵՅ ՊԻՍՈՎԻՉ



Drodzy czytelnicy,

Polecamy Waszej uwadze 12. numer czasopisma „Munetik”, który przynosi kronikę istotnych wydarzeń kulturalnych, naukowych, społecznych i religijnych z życia Ormian w Polsce, w okresie od września do listopada 2025 roku.

Niniejszy numer dedykowany jest 85. rocznicy urodzin wybitnego armenisty prof. Andrzeja Piszowicza i otwiera go wywiad zatyтуowany „O Armenii i języku ormiańskim”, przeprowadzony przez dr Tomasza Krzyżowskiego.

W numerze znalazł się także artykuł upamiętniający 90. rocznicę śmierci wielkiego Komitasa Wardapeta. Tekst zatyтуowany „Niech mój naród pozostanie żywy... ja nigdy nie zmarzę w jego sercu” opowiada o poruszających epizodach ostatniego okresu życia Komitasa oraz o jego bezgranicznym oddaniu własnemu narodowi.

Zachęcamy również do zapoznania się z tekstem „Mechitar Gosz – imię, które zobowiązuje”, przygotowanym z okazji otwarcia Centrum Studiów Armenistycznych im. Mechitara Gosza na Uniwersytecie im. Adama Mickiewicza w Poznaniu.

Pragniemy podziękować Czytelnikom za lekturę naszych publikacji w mijającym 2025 roku oraz za przekazywane nam życzliwe opinie.

Z radością informujemy, że w ciągu minionego roku udało się poszerzyć grono odbiorców pisma oraz podpisać porozumienia o współpracy z ważnymi instytucjami naukowo-kulturalnymi i osobami działającymi w Armenii i w Polsce.

Życzymy, aby nadchodzący rok przyniósł Państwu pokój i pomyślność.

Miłej lektury!

HRACZJA BOJADZJAN
Przewodniczący Rady Redakcyjnej

Սիրելի ընթերցողներ,

Ներկայացնում ենք «Մունետիկ» պարբերականի 12-րդ համարը, որը ներառում է 2025 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Լեհաստանում կյանքում տեղի ունեցած մշակութային, գիտական, հասարակական և կրոնական իրադարձությունները:

Համարը նվիրված է պրոֆեսոր Անջեյ Պիսովիչին ծննդյան 85-ամյակի առիթով, և բացվում է «Հայաստանի և հայոց լեզվի մասին» խորագիրը կրող հարցազրույցով, որն անցկացրել է դոկտոր Թոմաշ Զժիշովսկին:

Համարում հրապարակվել է նաև Կոմիտաս վարդապետի մահվան 90-րդ տարելիցին նվիրված հոդվածը: «Թող ողջ մնա իմ ժողովուրդը... ես նրա սրտում երբեք չեմ մոսի» վերնագրով տեքստը կենտրոնանում է կոմպոզիտորի կյանքի վերջին շրջանի վրա և նրա ամբողջական նվիրումը ժողովրդին:

Հրապարակումների շարքում տեղ է գտել նաև «Մխիթար Գոշ. անուն, որը պարտավորեցնում է» վերնագրով հոդվածը, որը պատրաստվել է Պոլ-Նանում Մխիթար Գոշի անվան Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի հիմնադրման առիթով և նվիրված է վարդապետի ստեղծագործական ժառանգությանն ու նշանակությանը:

2025 թվականին ընդլայնվել է պարբերականի ընթերցողների շրջանակը, ինչպես նաև ստորագրվել են համագործակցության հուշագրեր Հայաստանում և Լեհաստանում գործող գիտամշակութային հաստատությունների և անհատների հետ: Մաղթում ենք, որ գալիք տարին իր բերի խաղաղություն և բարգավաճում:

Բարի ընթերցանություն

ՀՐԱԶՅԱ ԲՈՅԱԶՅԱՆ
Խմբագրական խորհրդի նախագահ

SPIS TREŚCI

ԲՈՎԱՆԴԱՆԻՄՈՒՅՈՒՄ

Nr 4/2025(12)

01

Redakcja

Słowo od Redakcji

Խմբագրություն

Խմբագրական խոսք ընթերցողին

03

Wiadomości (wrzesień-październik-listopad)

Polityczne, społeczne, kulturalne, edukacyjne

ԱՆՍՏՈՒՊԱՐԺ (սեպտեմբեր-հոկտեմբեր-նոյեմբեր)

Քաղաքական, հասարակական, մշակութային, կրթական

15

TOMASZ KRZYŻOWSKI

O Armenii i języku ormiańskim.

Wywiad z armenistą Profesorem Andrzejem Pisowiczem

ԹՈՄԱՇ ԲՇԻՃՈՎՍԿԻ

Հայաստանի և հայոց լեզվի մասին.

Հարցազրույց հայագետ պրոֆեսոր Անժեյ Պիսովիչի հետ

29

O. ATANAS SARKISJAN

„Niech żyje mój naród... ja w jego sercu nigdy nie zmarznę”

ՏԵՐ ԱԹԱՆԱՍ ԱՔԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆ

«Թող ողջ մնա իմ ժողովուրդը... ես նրա սրտում երբեք չեմ մրսի»

34

HRACZJA BOJADŻJAN

Mechitar Gosz – imię, które zobowiązuje

ՀՐԱԶՅԱ ԲՈՅԱԶՅԱՆ

Մխիթար Գոշ. անուն, որը պարտավորեցնում է



Fot. Instytut Piramowicza

Spektakl „Araspel” w Wałbrzychu

■ W II Liceum Ogólnokształcącym w Wałbrzychu odbyła się 3 października premiera spektaklu „Araspel”, opartego na twórczości Howhannesa Tumaniana oraz ormiańskich bajkach i legendach.

Spektakl został zorganizowany przez Instytut Piramowicza we współpracy z Towarzystwem Ormian Polskich.

Dzień Ormiański we Wrocławiu

■ W Starym Refektarzu Uniwersytetu Wrocławskiego odbył się 17 października Dzień Ormiański – historia oraz tradycja, zorganizowany przez Instytut Grzegorza Piramowicza we współpracy z Towarzystwem Ormian Polskich. Wydarzenie zgromadziło ponad stu uczestników.

Debatę o obecności Ormian w Polsce – w ujęciu historycznym i współczesnym – poprowadził dr Andrzej Gliński. Wzięli w niej udział: Hraczja Bojadzjan (konsul Republiki Armenii), Diana Howakimian (Komisarz ds. Diaspory RA), prof. Krzysztof Stopka i dr Tomasz Krzyżowski (UJ).



Fot. Instytut Piramowicza

«Առասպել» ներկայացումը Վալբրժիխ քաղաքում

■ Սեպտեմբերի 3-ին Վալբրժիխ քաղաքի երկրորդ միջնակարգ դպրոցում (II Liceum Ogólnokształcące) կայացավ «Առասպել» ներկայացման պրեմիերան: Ներկայացումը հիմնված էր Յովհաննես Թումանյանի ստեղծագործությունների, ինչպես նաև հայկական հեքիաթների ու լեգենդների վրա:

Նախագիծը կյանքի էր կոչվել Գրիգոր Պիրամովիչի ինստիտուտի նախաձեռնությամբ՝ Լեհահայ ընկերակցության (Towarzystwo Ormian Polskich) հետ համագործակցությամբ:

Հայկական օր Վրոցլավում

■ Սեպտեմբերի 17-ին Վրոցլավի Համալսարանի «Հին Ռեֆեկտորիում» դահլիճում անցկացվեց «Հայկական օր. պատմություն և ավանդույթ» խորագրով միջոցառումը: Այն կազմակերպվել էր Գրիգոր Պիրամովիչի ինստիտուտի կողմից՝ Լեհահայ ընկերակցության (Towarzystwo Ormian Polskich) հետ համագործակցությամբ: Միջոցառմանը մասնակցեց ավելի քան հարյուր մարդ:

Լեհաստանում հայերի ներկայության մասին բանավեճը, որն ուներ պատմական և ժամանակակից ենթատեքստ, վարեց դոկտոր Անջեյ Գլինսկին: Քննարկմանը մասնակցեցին Լեհաստանում ՀՀ հյուպատոս Հրաչյա Բոյաջյանը, Լեհաստանում ՀՀ Սփյուռքի հարցերով հանձնակատար Դիանա Հովակիմյանը, ինչպես նաև պրոֆ. Քրիշտոֆ Ստոպկան և դոկտոր Թոմաշ Բոժիժովսկին՝ Յագելոնյան համալսարանից:

Մշակութային բաժնում հանդես եկան՝ Go ARM խումբը, Նելլի Մարտիրոսյանը (դասախոսություն և համերգ), Գայանե Շահմուրադյանը (մետաքսի վրա նկարում), և Թանիա Սայեդը (գրեյլենագործության ցուցադրություն): Տեղի ունեցավ նաև «Լեհական քաղաքականության, տնտեսության և մշակույթի մեջ արժանիք ունեցող նշանավոր լեհահայերը» խորագրով ցուցահանդեսը: Մասնակիցներին տրամադրվեցին ցուցահանդեսի կատալոգը և հայկական հրատարակություններ:

Ծրագիրը ֆինանսավորվել է Լեհաստանի Պատմության թանգարանի կողմից՝ «Վաղվա հայրենասիրություն» ծրագրի շրջանակում, հայկական փոքրամասնության «Munetik» ամսագրի և munetik.pl մեդիա պորտալի հովանու ներքո:

Հայաստանի դեսպանի հանդիպումը փոխնախարար Մարչին Բոսացկու հետ

■ Սեպտեմբերի 17-ին Լեհաստանում Հայաստանի դեսպան Ալեքսանդր Արզումանյանը հանդիպել է Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում Նորանշանակ պետքարտուղար Մարչին Բոսացկու հետ:

W części artystycznej wystąpili: zespół Go ARM, Nelli Martirosjan (prelekcja i koncert), Gajane Szahmuranian (malowanie na jedwabiu) oraz Tania Sajegh (pokaz tkacki). Zaprezentowano również wystawę „Wybitni Polscy Ormianie zasłużeni dla polskiej polityki, gospodarki oraz kultury”. Uczestnicy otrzymali katalog ekspozycji i ormiańskie publikacje.

Projekt dofinansowano ze środków Muzeum Historii Polski w ramach programu „Patriotyzm Jutra” pod patronatem medialnym czasopisma mniejszości ormiańskiej „Munetik” oraz serwisu munetik.pl.

Spotkanie ambasadora Armenii z wiceministrem Marcinem Bosackim



Fot. ARA

■ W dniu 17 września ambasador Armenii w Polsce, Alexander Arzumanyan spotkał się z nowo mianowanym sekretarzem stanu w Ministerstwie Spraw Zagranicznych RP Marcinem Bosackim.

Rozmowa dotyczyła współpracy dwustronnej i wielostronnej pomiędzy Armenią a Polską oraz możliwych kierunków dalszego rozwoju relacji politycznych, gospodarczych i kulturalnych. Omówiono także bieżące kwestie dotyczące partnerstwa w ramach instytucji międzynarodowych.

34. rocznica niepodległości Armenii – przyjęcie w Warszawie

■ W gmachu Centralnej Biblioteki na warszawskiej starówce 19 września odbyło się uroczyste przyjęcie z okazji 34. rocznicy niepodległości Republiki Armenii, zorganizowane przez Ambasadę Armenii w Polsce.

Występując z przemówieniem, ambasador Armenii Alexander Arzumanyan podkreślił przyjaźń łączącą Armenię i Polskę oraz znaczenie dalszego rozwoju wzajemnych relacji. W imieniu polskich władz zabrał Marcin Bosacki, sekretarz stanu w Ministerstwie Spraw Zagranicznych RP, który zaakcentował potrzebę wzmacniania współpracy dwustronnej.

W przyjęciu udział wzięli przedstawiciele rządu RP, posłowie i senatorowie, członkowie Polsko-Armeńskiej Grupy Parlamentarnej, szefowie misji dyplomatycznych akredytowanych w Warszawie, liderzy organizacji ormiańskich w Polsce.

Żanդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի և Լեհաստանի միջև երկկողմ համագործակցության հարցերը, ինչպես նաև քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների հետագա զարգացման հնարավոր ուղղությունները: Քննարկվել են նաև միջազգային կառույցների շրջանակում գործընկերությանը վերաբերող ընթացիկ հարցերը:

Հանդիսավոր ընդունելություն Վարշավայում՝ Հայաստանի Հանրապետության անկախության 34-ամյակի առիթով

■ Սեպտեմբերի 19-ին Վարշավայի Հին Քաղաքի կենտրոնական գրադարանի շենքում տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 34-րդ տարեդարձին: Միջոցառումը կազմակերպվել էր Լեհաստանում Հայաստանի դեսպանատան կողմից:

Լեհաստանում ՀՀ դեսպան Ալեքսանդր Արզումանյանը իր ելույթում ընդգծեց Հայաստանի և Լեհաստանի միջև գոյություն ունեցող բարեկամությունը և փոխհարաբերությունների հետագա զարգացման կարևորությունը: Լեհաստանի կառավարության անունից ելույթ ունեցավ Արտաքին գործերի նախարարը:



Fot. ARA



Fot. ARA



Fot. Facebook/Konsulat Honorowy Republiki Armenii

Krzyż Zasługi dla Konsula Honorowego Armenii

■ Dnia 22 września w Westybulu Śląskiego Urzędu Wojewódzkiego w Katowicach odbyła się uroczystość wręczenia odznaczeń państwowych. Brązowy Krzyż Zasługi, nadany przez Prezydenta RP Andrzeja Dudę, odebrał Konsul Honorowy Republiki Armenii Hraczja Bojadżjan.

Odnaczenie przyznano za zasługi w działalności społecznej na rzecz mniejszości ormiańskiej w Polsce oraz za wkład w budowanie relacji polsko-ormiańskich.

Koncert muzyki ormiańskiej w Warszawie

■ W dniu 26 września w sali Nowa Miodowa w Warszawie odbył się koncert pt. „Armenio, kraju niebiański, ty rodu mego ludzkiego kolebko”, zorganizowany przez Fundację Armenian Foundation. Wydarzenie miało na celu zaprezentowanie wybranych utworów muzyki ormiańskiej zarówno liturgicznej, jak i świeckiej w możliwie szerokim ujęciu.



Fot. Facebook/Fundacja Ormiańska

rworության պետնախարար Մարչին Բոսացկին՝ շեշտելով երկկողմ համագործակցության խորացման անհրաժեշտությունը:

Ընդունելությանը մասնակցեցին Լեհաստանի կառավարության ներկայացուցիչներ, պատգամավորներ և սենատորներ, Հայ-լեհական խորհրդարանական խմբի անդամներ, Վարչապետի հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, ինչպես նաև Լեհաստանում գործող հայկական կազմակերպությունների առաջնորդներ:

«Վաստակի խաչ» Հայաստանի Պատվավոր Հյուպատոսին

■ 2025 թվականի սեպտեմբերի 22-ին Կատովիցեի Սիլեզիական Վոյևոդության գրասենյակի Նախարահում տեղի ունեցավ պետական պարգևատրման հանդիսավոր արարողություն: Բրոնզե Վաստակի խաչը, որը շնորհվում է Լեհաստանի Հանրապետության Նախագահ Անջեյ Դուդայի կողմից, հանձնվեց Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Հրաչյա Բոյաջյանին: Պարգևը շնորհվել է Լեհաստանում հայ փոքրամասնության օգտին իրականացրած հասարակական գործունեության, ինչպես նաև հայ-լեհական հարաբերությունների կառուցման գործում ներդրած ավանդի համար:

Հայկական երաժշտական համերգ Վարչապետի

■ Սեպտեմբերի 26-ին Վարչապետի «Նովա Մյոդովա» դահլիճում տեղի ունեցավ «Հայաստան, երկնային երկիր, դու իմ մարդկային տոհմի օրրան» խորագրով համերգը, որը կազմակերպել էր «Արմենիան» հիմնադրամը: Միջոցառման նպատակն էր հնարավորինս լայն կերպով ներկայացնել հայկական երաժշտության հատընտիր ստեղծագործություններ՝ ինչպես եկեղեցական, այնպես էլ աշխարհիկ:

Ծրագրում ներառված էին, ի թիվս այլոց, Կոմիտասի ստեղծագործությունները, Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետից հատվածներ, Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմը» և ավանդական երգեր: Ստեղծագործությունների կատարումը վստահված էր հայ և լեհ արտիստներին: Երեկոն անցավ տարբեր երաժշտական ոճերի ընդգրկմամբ, ինչը հանդիսատեսին լայն հնարավորություն տվեց սեփական մեկնաբանությունների համար:

Հայկական մշակույթի IV փառատոնը Կատովիցեում

■ 2025 թվականի սեպտեմբերի 27-ին Կատովիցեում տեղի ունեցավ Հայկական մշակույթի IV փառատոնի երկրորդ մասը, որն ամփոփեց Վարչապետի մինչև Կատովիցե տևած ամբողջ տարվա իրադարձությունների շարքը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին և Լեհաստանի Հանրապետության Սեյմի կողմից այդ ոճագործությունը դատապարտող բանաձևի 20-ամյակին: Փառատոնի այս տարվա թողարկման շրջանակներում, որն ընդգրկում էր համերգներ, ցուցահանդեսներ և գիտաժողով, հանդես եկան ավելի քան 100 արտիստ-

W programie znalazły się m.in. kompozycje Komi-tasa, fragmenty baletu “Gajane” Arama Chaczaturiana, “Requiem” Tigrana Mansuriana oraz pieśni tradycyjne. Repertuar zaprezentowali artyści z Polski i Armenii.

Wieczór przebiegał w stylistycznym bogactwie, które pozostawiło publiczności szerokie pole do własnych interpretacji.

IV Festiwal Kultury Ormiańskiej – śląska odsłona w Katowicach

■ Dnia 27 września w Katowicach odbyła się druga odsłona IV Festiwalu Kultury Ormiańskiej, która zamknęła całoroczny cykl wydarzeń od Warszawy do Katowic, dedykowanych pamięci 110. rocznicy Ludobójstwa Or-



Fot. OPKS



Fot. OPKS

ներ և բանախոսներ Լեհաստանից և Հայաստանից:

Ծրագիրը սկսվեց Սիլվեզիայի գրադարանում՝ «Վկաներ» ցուցահանդեսի բացմամբ, որը կազմակերպվել էր Երևանի Հայոց ցեղասպանության թանգարանի հետ համագործակցության արդյունքում: Ցուցահանդեսն առաջին անգամ Լեհաստանում ներկայացվեց բավականին լայն շրջանակով: Հատուկ տեղ էր գրավում Լեոպոլդ Գաշչիկի կերպարը՝ սիլվեզիացի, ով փաստագրում էր հայ փախստականների ճակատագրերը Սիրիայում:

Բացմանը անմիջապես հաջորդեց «Հայ փոքրամասնության պատմական հիշողությունը Լեհաստանում՝ Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցի կապակցությամբ» թեմայով գիտաժողովը՝ հայտնի հայագետների մասնակցությամբ: Ելույթ ունեցան, ի թիվս այլոց, պրոֆ. Զիչտոֆ Ստոպկան, դոկտոր Անջեյ Զիեբան, դոկտոր Թոմաշ Զիժովսկին, դոկտոր Անջեյ Գլինսկին, դոկտոր Դոմինիկա Մացիոսը և Պյոտր Օշկովսկին:

Օրվա եզրափակիչ իրադարձությունը միջազգային ճանաչում ունեցող Արսեն Պետրոսյան Քառյակի համերգն էր, որը տեղի ունեցավ «Կատովիցե Պարտեզ-Քաղաք» համերգասրահում: Համույթը, որը հանդես եկավ ազգային նվագարաններով, ուներ հետևյալ կազմը. Արսեն Պետրոսյան՝ Արսեն Պետրոսյան (դուդուկ), Աստղիկ Մսեցունց (քանոն), Վլադիմիր Պապիկյան (սանթուր) և Ավետիս Բյոսեյան (դիոլ, հարվածայիններ)՝ նվագելով հայկական ավանդական գործիքներով: Համերգը, որը նվիրված էր Կոմիտասի մահվան 90-րդ տարելիցին, գրավեց Կատովիցեից և տարածաշրջանից եկած բազմաթիվ հանդիսատես-



Fot. OPKS



Fot. OPKS

Smbataberd, udział w Festiwalu Wina w Areni oraz odwiedziny w Szkole nr 1 w Jechegnadzorze, dla której planowana jest współpraca ze szkołami w Polsce.

Na podstawie podpisanych porozumień burmistrzowie Eugeniusz Święcki (Ciechanowiec), Dawid Harutiunian (Jechegnadzor), Mariusz Oleś (Orzesze) oraz Mechitar Matewosjan (Waik) uzgodnili realizację wspólnych projektów. Obejmują one m.in. wakacyjny pobyt w Polsce dla dzieci z rodzin poszkodowanych wojną o Arcach, letnie obozy młodzieżowe w regionie Wajoc Dzor, a także współpracę w obszarze kultury i edukacji.

W miastach partnerskich w Polsce i Armenii planowane jest również nadanie nazw ulic, skwerów i parków odnoszących się do współpracy polsko-ormiańskiej. Wśród dalszych inicjatyw omówiono możliwość zaproszenia zespołów muzycznych z regionu Wajoc Dzor na 5. Festiwal Kultury Ormiańskiej w Polsce.

Spotkanie „Armenia znana i nieznaną” w Warszawie

■ W siedzibie Fundacji Kultury i Dziedzictwa Ormian Polskich przy ul. Świętojerskiej 12 w Warszawie 11 października odbyło się spotkanie z cyklu „Armenia znana i nieznaną”. Było ono poświęcone kulturze, sztuce oraz historii Armenii.

Spotkanie poprowadziła Marina Khanamirjan, która zaprezentowała wykład dotyczący języka ormiańskiego, obejmujący zagadnienia alfabetu, znaczenia języka w kulturze oraz wybranych elementów literatury ormiańskiej. Wystąpienie stanowiło część cyklicznych spotkań organizowanych przez Fundację.

Wstęp na wydarzenie był wolny, a spotkanie zgromadziło osoby zainteresowane kulturą ormiańską oraz działalnością Fundacji Kultury i Dziedzictwa Ormian Polskich.

Kanonizacja arcybiskupa Ignacego Malojana w Watykanie

■ Na Placu św. Piotra w Watykanie odbyła się 19 października msza kanonizacyjna arcybiskupa Ignacego Malojana, męczennika ludobójstwa Ormian. Liturgii przewodniczył papież Leon XIV.

W uroczystości uczestniczyli duchowni Kościoła ormiańskokatolickiego, przedstawiciele wspólnot z Libanu, Syrii i Armenii, a także liczni wierni z diaspory ormiańskiej w Europie i Ameryce. Obecni byli delegaci Kościołów wschodnich oraz instytucji Stolicy Apostolskiej. W ceremonii wzięli udział premier Armenii Nikol Paszynian, przebywający w Watykanie z wizytą oficjalną.

Ignacy Malojan urodził się w 1869 r. w Mardin. Po formacji w klasztorze ormiańskokatolickim w Bzommar w Libanie przyjął święcenia kapłańskie w 1896 r., a w 1911 r. został mianowany arcybiskupem Mardin. W czasie narastających prześladowań chrześcijan na terenie Imperium Osmańskiego pełnił posługę wśród miejscowej wspólnoty. W czerwcu 1915 r., podczas ludobójstwa Ormian, został aresztowany. Odmówił porzucenia wiary pomimo tortur i gróźb. Zginął 11 czerwca 1915 r., rozstrzelany wraz z kilkuset wiernymi – duchownymi, osobami konsekrowanymi i świeckimi.

nr Lēhաստանում անցկացվելիք Հայկական մշակույթի 5-րդ փառատոնին:

«Հայաստանը՝ հայտնի և անհայտ» հանդիպումը Վարշավայում

■ Հոկտեմբերի 11-ին Վարշավայի Շվեյտսոյերսկա 12 հասցեում գտնվող Lēհահայ մշակույթի և ժառանգության հիմնադրամի գրասենյակում տեղի ունեցավ «Հայաստանը՝ հայտնի և անհայտ» շարքի հերթական հանդիպումը: Միջոցառումը սվիրված էր Հայաստանի մշակույթին, արվեստին և պատմությանը:

Հանդիպումը վարեց Մարինա Խանամիրյանը, ով հանդես եկավ հայերեն լեզվի վերաբերյալ գեկուցմամբ: Զեկույցում ներկայացվեցին հայոց այբուբենը, լեզվի դերը մշակույթում, ինչպես նաև հայկական գրականության որոշ հատկանիշներ: Այս միջոցառումը հանդիսանում էր Հիմնադրամի կազմակերպած պարբերական հանդիպումների մի մասը:

Միջոցառումը բաց էր բոլոր ցանկացողների համար և համախմբել էր այն մարդկանց, ովքեր հետաքրքրված են հայկական մշակույթով և Lēհահայ մշակույթի և ժառանգության հիմնադրամի գործունեությամբ:

Վատիկանում տեղի ունեցավ արքեպիսկոպոս Իգնատիոս Մալոյանի սրբադասման արարողությունը

■ Հոկտեմբերի 19-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի հրապարակում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության նահատակ, արքեպիսկոպոս Իգնատիոս Մալոյանի սրբադասման Սուրբ Պատարագը: Սրբազան արարողությունն առաջնորդեց Հռոմի Պապ Լևոն ԺԴ-ը:

Տոնական արարողությանը մասնակցում էին Հայ Կաթողիկե Եկեղեցու հոգևորականներ, Լիբանանից, Սիրիայից և Հայաստանից ժամանած համայնքների ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծ թվով հավատացյալներ եվրոպական և ամերիկյան սփյուռքից: Ներկայացուցչություն ունեին նաև Արևելյան Եկեղեցիների պատվիրակները և Սուրբ Աթոռի տարբեր հաստատությունների անդամներ: Միջոցառմանը ներկա էր նաև Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ով Վատիկանում էր գտնվում պաշտոնական այցով:

Իգնատիոս Մալոյանը ծնվել է 1869 թվականին Մարդին քաղաքում: Հոգևոր կրթությունը ստացել է Լիբանանի Չմմառի վանքի հայ կաթոլիկ դպրոցում, իսկ 1896 թվականին ձեռնադրվել է քահանա: 1911 թվականին նշանակվել է Մարդինի արքեպիսկոպոս: Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների դեմ ուժգնացող հալածանքների ժամանակ նա շարունակել է հոգևոր ծառայությունը տեղի հավատացյալների շրջանում: 1915 թ. հունիսին՝ Հայոց ցեղասպանության ընթացքում, նրան ձերբակալում են: Չնայած խոշտանգումներին և սպառնալիքներին՝ նա հրաժարվում է ուրանալ իր հավատը: 1915 թվականի հունիսի 11-ին գնդակահարվում է մի քանի հարյուր հավատացյալների՝ հոգևորականների, միանձնուհիների և աշխարհականների հետ միասին:

Beatyfikacji jako męczennika dokonał papież Jan Paweł II w 2001 r. Decyzję o kanonizacji zatwierdził papież Franciszek w styczniu 2025 r., uznając heroiczną jego świadectwa. Uroczystą mszę kanonizacyjną celebrował papież Leon XIV.

Relikwie świętego Ignacego Malojana mają zostać przekazane do klasztoru w Bzommar, który był miejscem jego formacji i pozostaje głównym ośrodkiem Kościoła ormiańskokatolickiego. Przewidziano także przekazanie relikwii wspólnotom w Armenii oraz diasporze.

Nowy rozdział w dziejach armenistyki w Polsce

■ W Poznaniu odbyła się 27 października inauguracja działalności Centrum Studiów Armenistycznych imienia Mechitara Gosza na Uniwersytecie im. Adama Mickiewicza - pierwszego w Polsce akademickiego ośrodka poświęconego badaniom nad Armenią i dziedzictwem ormiańskim.

Podczas uroczystości rektor Uniwersytetu imienia Adama Mickiewicza, profesor Bogumiła Kaniewska, wręczyła nominacje członkom Rady Programowej. W jej skład weszli ambasador Armenii Alexander Arzumian, Hraczja Bojadżjan, przedstawiciel mniejszości ormiańskiej, prorektor profesor Rafał Witkowski oraz dyrektor Centrum, profesor Adam Pomieciński. Tego samego dnia odbyło się pierwsze posiedzenie Rady, podczas którego jednogłośnie wybrano na jej przewodniczącą Hraczję Bojadżjana.

Jednym z filarów działalności Centrum są studia podyplomowe „Armenistyka”, których program łączy naukę języka ormiańskiego z poznawaniem historii i współczesności Armenii. Na pierwszy semestr zapisało się czterdziestu pięciu studentów.

Նրան երանելիների շարքին դասելը իբրև ևահատակ իրականացրել էր Հովհաննես Պողոս Բ Պապը 2001 թվականին: Սրբադասման որոշումը հաստատեց Ֆրանցիսկոս Պապը 2025 թվականի հունվարին՝ ճանաչելով նրա վկայության հերոսական բնույթը: Սրբադասման հանդիսավոր պատարագը մատուցեց Լևոն ԺԴ Պապը:

Սուրբ Իգնատիոս Մալոյանի մասունքները պետք է հանձնվեն Ջմմառի վանքին, որտեղ ևս ստացել էր իր հոգևոր կրթությունը, և որն այսօր հանդիսանում է Հայ Կաթողիկե Եկեղեցու գլխավոր կենտրոններից մեկը: Մասունքների մի մասը նախատեսվում է փոխանցել նաև Հայաստանի համայնքներին և սփյուռքին:

Նոր էջ հայագիտության պատմության մեջ Լեհաստանում

■ 2025 թ. հոկտեմբերի 27-ին Պոզնանում տեղի ունեցավ Մխիթար Գոշի անվան հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի հանդիսավոր բացումը: Այն Լեհաստանում առաջին ակադեմիական հաստատությունն է, որը նվիրված է Հայաստանի և հայ մշակութային ժառանգության ուսումնասիրությանը:

Միջոցառման ընթացքում Ադամ Միցկևիչի անվան համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Բոգումիլա Կանևսկան կատարեց նորաստեղծ կենտրոնի խորհրդի անդամների նշանակումները: Խորհրդի կազմում ընդգրկվել են Լեհաստանում Հայաստանի դեսպան Ալեքսանդր Արզումանյանը, Լեհաստանի կառավարության, ազգային և էթնիկ փոքրամասնությունների միացյալ հանձնաժողովում հայ փոքրամասնության ներկայացուցիչ Հրաչյա Բոյաջյանը, համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Ռաֆալ Վիտկովսկին և



Fot. Ambasada Republiki Armenii w Polsce

Przełomowym momentem w tworzeniu Centrum było podpisanie memorandum o porozumieniu - dokumentu założycielskiego pomiędzy Uniwersytetem imienia Adama Mickiewicza, Ministerstwem Edukacji, Nauki, Kultury i Sportu Armenii oraz przedstawicielem mniejszości ormiańskiej w Komisji Wspólnej Rządu i Mniejszości Narodowych i Etnicznych. Działalność Centrum jest współfinansowana przez Ministerstwo oraz przedstawiciela mniejszości ormiańskiej w Komisji.

Otwarcie Centrum Studiów Armenistycznych imienia Mechtara Gosza to wydarzenie bez precedensu zarówno dla rozwoju polskiej armenistyki, jak i dla umacniania stosunków polsko-ormiańskich.

Armenia po raz pierwszy na Wrocławskim Dniu Paszportu

■ Na terenie Portu Lotniczego Wrocław odbył się 28 października tegoroczny Dzień Paszportu, organizowany przez Miasto Wrocław we współpracy z konsulatami działającymi w mieście. W wydarzeniu wzięło udział ponad tysiąc odwiedzających, głównie młodych ludzi, którzy kolejno odwiedzali stoiska przedstawiające kultury różnych państw.

Po raz pierwszy zaprezentowało się również stoisko Konsulatu Honorowego Republiki Armenii, przygotowane we współpracy z przedstawicielami mniejszości ormiańskiej we Wrocławiu. Zwiedzający mogli spróbować tradycyjnej gaty przygotowanej przez restaurację Give Me Chinkali, obejrzeć ormiańskie rękodzieło Pani Tanii Sajegh, zapoznać się z edukacyjną grą „Ormiańscy Bracia” Instytutu Piramowicza oraz otrzymać dwujęzyczne czasopismo „Munetik” i katalog wystawy poświęconej wybitnym Polakom ormiańskiego pochodzenia.

Stoisko zostało przygotowane dzięki zaangażowaniu: Ruzan Geworgian, Tanii Sajegh, Szuszan Karapetian, dr. Andrzeja Glińskiego, Krzysztofa Mojzesowicza oraz restauracji Give Me Chinkali. Dzięki wspólnej pracy Armenia została zaprezentowana w sposób uporządkowany i atrakcyjny, a jej obecność została dobrze przyjęta przez uczestników wydarzenia.



Fot. Facebook/DKiDOP

կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Ադամ Պոմեճիսակին: Նույն օրը կայացավ խորհրդի առաջին նիստը, որի ընթացքում միաձայն որոշվեց նախագահի պաշտոնում ընտրել Հրաչյա Բոյաջյանին:

Կենտրոնի հիմնական ուղղություններից է «Հայագիտություն» հետդիպլոմային ծրագիրը, որը համատեղում է հայերեն լեզվի ուսուցումը Հայաստանի պատմության և արդի իրականության մասին գիտելիքների հետ: Ծրագրի առաջին փուլին մասնակցելու համար գրանցվել է 45 ուսանող, որը ռեկորդային թիվ է:

Կենտրոնի ստեղծման կարևոր հանգրվանն էր համագործակցության հուշագրի՝ հիմնադիր փաստաթղթի ստորագրումը: Այն ստորագրվել է Ադամ Միցկևիչի անվան համալսարանի, Հայաստանի Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարության և Լեհաստանի կառավարության, ազգային և էթնիկ փոքրամասնությունների միացյալ հանձնաժողովում հայ փոքրամասնության ներկայացուցչի միջև:

Կենտրոնի գործունեությունը համաֆինանսավորվում է նախարարության և հայ համայնքի ներկայացուցիչների կողմից:

Մխիթար Գոշի անվան հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի բացումը նշանակալի իրադարձություն է ոչ միայն լեհահայագիտության զարգացման, այլև հայ-լեհական հարաբերությունների խորացման գործում:

Հայաստանի առաջին մասնակցությունը Վրոցլավի «Անձնագրի օրվան»

■ Հոկտեմբերի 28-ին Վրոցլավի օդանավակայանի տարածքում անցկացվեց այս տարվա «Անձնագրի օրը», որը կազմակերպել էր Վրոցլավի քաղաքապետարանը՝ քաղաքում գործող հյուպատոսությունների հետ համագործակցությամբ: Միջոցառմանը մասնակցեց ավելի քան հազար այցելու, հիմնականում երիտասարդներ, ովքեր հերթով այցելում էին տարբեր երկրների մշակույթը ներկայացնող տաղավարները:

Առաջին անգամ իր տաղավարով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոսությունը՝ Վրոցլավի հայ համայնքի ներկայացուցիչների հետ համատեղ: Այցելուները կարող էին համոզվել ավանդական գաթա, որը պատրաստել էր GiveMe.Chinkali ռեստորանը, դիտել Տանյա Սայեդի պատրաստած հայկական ձեռագործները, ծանոթանալ «Հայ եղբայրներ» կրթական խաղին, որը ստեղծվել է Պիրամովիչի ինստիտուտի կողմից, ինչպես նաև ստանալ երկլեզու MUNETIK հանդեսը և կատալոգ՝ նվիրված նշանավոր լեհահայ գործիչներին:

Տաղավարը կազմակերպվել էր Ռուզան Գևորգյանի, Տանյա Սայեդի, Ծուշան Կարապետյանի, դոկտոր Անջեյ Գլինսկու, Քշիշտոֆ Մոյժեսովիչի և GiveMe.Chinkali ռեստորանի ջանքերով: Համատեղ աշխատանքի շնորհիվ Հայաստանը ներկայացվեց կառուցվածքային և գրավիչ կերպով, իսկ նրա ներկայությունը բարձր գնահատվեց միջոցառման մասնակիցների կողմից:

LISTOPAD-ՆՈՅԵՄԲԵՐ

Porozumienie Ormiańsko-Polskiego Komitetu Społecznego z Biblioteką Jagiellońską

■ W dniu 6 listopada zawarto porozumienie o współpracy pomiędzy Ormiańsko-Polskim Komitetem Społecznym, wydawcą czasopisma mniejszości ormiańskiej „Munetik” oraz serwisu Munetik.pl, a Biblioteką Jagiellońską Uniwersytetu Jagiellońskiego, jedną z najstarszych i najbardziej znaczących instytucji naukowych w Europie.

Na mocy podpisanego dokumentu „Munetik” zostanie włączony do Jagiellońskiej Biblioteki Cyfrowej oraz Repozytorium Uniwersytetu Jagiellońskiego. Dzięki temu czasopismo zyska trwałą obecność w krajowym i międzynarodowym obiegu naukowym, a jego treści będą dostępne dla badaczy, studentów i instytucji akademickich na całym świecie.

Włączenie „Munetiku” do zasobów Biblioteki Jagiellońskiej wzmacnia pozycję pisma oraz poszerza możliwości dotarcia do odbiorców zainteresowanych historią, kulturą i współczesnym życiem mniejszości ormiańskiej w Polsce.

Ormiańskie kino w Warszawie: pokaz filmów Wahrama Mchitariana

■ W Centrum Wielokulturowym w Warszawie odbył się 8 listopada pokaz dwóch ormiańskich filmów krótkometrażowych autorstwa Wahrama Mchitariana: „Pieśni pasterza” oraz „Mlecznego brata”. Wydarzenie przyciągnęło liczną publiczność i stało się kolejną okazją do prezentacji współczesnej kultury ormiańskiej w Polsce.

„Pieśń pasterza” to opowieść o niewidomym pasterzu z gór Armenii i jego synu, u którego pojawiają się pierwsze objawy tej samej choroby. Film ukazuje siłę rodzinnych więzi i zmaganie się człowieka z losem.

„Mleczny brat” przedstawia historię 10-letniego Seto, który po stracie brata odnajduje niezwykłą więź z jagnięciem. To delikatna, symboliczna opowieść o dojrzywaniu i oswojaniu żałoby.



Fot. Facebook/OMO

WIADOMOŚCI ԼՐԱՅՈՒ

Համագործակցության համաձայնագիր Հայ-լեհական հասարակական կոմիտեի և Յագելոնյան գրադարանի միջև

■ Նոյեմբերի 6-ին կնքվեց համագործակցության համաձայնագիր Հայ-լեհական հասարակական կոմիտեի՝ հայկական փոքրամասնության «Մունետիկ» հանդեսի, Munetik.pl կայքի հրատարակչի և Յագելոնյան համալսարանի գրադարանի՝ Եվրոպայի ամենահին և ամենահեղինակավոր գիտական հաստատություններից մեկի միջև:

Ստորագրված փաստաթղթի համաձայն՝ «Մունետիկ» հանդեսը կներառվի Յագելոնյան թվային գրադարանի և Յագելոնյան համալսարանի Ռեպոզիտորիումի (արխիվային պահոց) շտեմարաններում: Այս ձևով հանդեսը մշտապես կլինի ազգային և միջազգային գիտական շրջանառության մեջ, իսկ դրա բովանդակությունը հասանելի կլինի հետազոտողների, ուսանողների և ակադեմիական հաստատությունների համար ամբողջ աշխարհում:

«Մունետիկ»-ի ներառումը Յագելոնյան գրադարանի ռեսուրսներում ամրապնդում է պարբերականի դիրքը և ընդլայնում հասանելիությունը այն ընթերցողների համար, ովքեր հետաքրքրված են Լեհաստանում հայկական փոքրամասնության պատմությամբ, մշակույթով և ժամանակակից կյանքով:

Հայկական կինոյի երեկո Վարշավայում. Վահրամ Մխիթարյանի ֆիլմերի ցուցադրությունը

■ Նոյեմբերի 8-ին Վարշավայի Բազմամշակութային կենտրոնում կայացավ հայկական կարճամետրաժ կինոյի երեկո: Ցուցադրվեցին Վահրամ Մխիթարյանի երկու ֆիլմերը՝ «Հովվի երգը» և «Կաթնեղբայրը»: Միջոցառումը գրավեց բազմաթիվ հանդիսատեսների ուշադրությունը և դարձավ ժամանակակից հայկական մշակույթը ներկայացնելու ևս մեկ նշանակալի առիթ Լեհաստանում:

«Հովվի երգը» պատմում է Հայաստանի լեռներում ապրող մի կույր հովվի և նրա որդու մասին, որի մոտ սկսում են ի հայտ գալ նույն հիվանդության նշանները: Ֆիլմը խորությամբ արտահայտում է ընտանեկան կապի ուժն ու մարդու պայքարը ճակատագրի դեմ:

«Կաթնեղբայրը» ներկայացնում է 10-ամյա Սետոյի պատմությունը, ով եղբոր կորստից հետո ձևավորում է հուզիչ ու խորհրդանշական կապ մի գառի հետ: Սա նուրբ պատմություն է՝ հասունացման ու վշտի հաղթահարման մասին:

Ցուցադրությունից հետո տեղի ունեցավ զրույց ֆիլմերի ստեղծագործական խմբի հետ: Մասնակցեցին ռեժիսոր Վահրամ Մխիթարյանը և «Կաթնեղբայրը» ֆիլմի բեմադրող նկարիչ Էդուարդ Հակոբյանը: Ձրույցը վարեց Լեհաստանում Հայ երիտասարդության կազմակերպության նախագահ Նունե Գևորգյանը:

Ցուցադրությունն ունեցել է ոչ առևտրային բնույթ և բաց էր բոլորի համար: Միջոցառումը ջերմ ընդունելու-

Po projekcjach odbyło się spotkanie z twórcami: Wahramem Mchitarianem oraz Eduardem Hakobianem, scenografem „Mlecznego brata”. Rozmowę poprowadziła Nune Geworgian, Prezes Organizacji Młodzieży Ormiańskiej w Polsce.

Pokaz miał charakter niekomercyjny i był otwarty dla publiczności. Wydarzenie zostało bardzo dobrze przyjęte, wzmacniając obecność ormiańskiej sztuki filmowej w kulturalnym życiu Warszawy.

Udział przedstawiciela mniejszości ormiańskiej w Forum Sztuki i Kultury Ormiańskiej w Erywanii



Fot. BKDRA

■ Na zaproszenie Wysokiego Komisarza ds. Diaspory Republiki Armenii, Zareha Sinaniana, 21 listopada przedstawiciel mniejszości ormiańskiej w Polsce, Hraczja Bojadżjan, wziął udział w panelu „Dyplomacja kulturalna jako strategiczne narzędzie soft power” podczas Forum Sztuki i Kultury Ormiańskiej w Erywanii.

W gronie wybitnych przedstawicieli świata kultury i diaspory omawiano rolę dyplomacji kulturalnej, nowe modele współpracy między instytucjami państwowymi a diasporą oraz sposoby skutecznej ochrony i promocji ormiańskiego dziedzictwa na arenie międzynarodowej.

Wernisaż wystawy „Teodor Torosiewicz – apteki i uzdrowiska Galicji”

■ W Skarbnicy Polskich Ormian w Warszawie 22 listopada otwarto wystawę czasową „Teodor Torosiewicz – apteki i uzdrowiska Galicji”



Fot. Facebook/DKiDOP

թյուն է գտել և ամրապնդել հայկական կինոյի ներկայությունը Վարշավայի մշակութային դաշտում:

Լեհաստանում հայկական փոքրամասնության ներկայացուցչի մասնակցությունը Երևանում անցկացված Ջայ արվեստի և մշակույթի համաժողովին

■ Նոյեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Սփյուռքի հարցերով հանձնակատար Զարեհ Սինանյանի հրավերով, Լեհաստանում հայկական փոքրամասնության ներկայացուցիչ Հրաչյա Բոյաջյանը մասնակցեց «Մշակութային դիվանագիտու-



Fot. BKDRA

թյունը որպես սոֆթ-փաուերի ռազմավարական գործիք» խորագրով քննարկմանը՝ Երևանում կայացած Ջայ արվեստի և մշակույթի համաժողովի շրջանակում:

Մշակույթի և սփյուռքի ճանաչված ներկայացուցիչների շրջանակում քննարկվեցին մշակութային դիվանագիտության դերը, պետական կառույցների և սփյուռքի միջև համագործակցության նոր մոդելները, ինչպես նաև հայկական մշակութային ժառանգության արդյունավետ պահպանման և միջազգային հարթակում դրա ներկայացման ուղիները:

«Թեոդոր Թորոսիչ – Գալիցիայի դեղատներն ու առողջարանները» ցուցահանդեսի բացումը Վարշավայում

■ 2025 թվականի նոյեմբերի 22-ին Վարշավայի Լեհահայոց ժառանգության սրահում բացվեց ժամանակավոր ցուցահանդես «Թեոդոր Թորոսիչ-Գալիցիայի դեղատներն ու առողջարանները» խորագրով, կազմակերպված Լեհահայ մշակույթի և ժառանգության հիմնադրամի կողմից: Ցուցադրությունը նվիրված է 19-րդ դարի հայազգի ականավոր մտավորականներից մեկին՝ դեղագետ, բալնեոլոգիայի նորարար և գիտական գործիչ Թեոդոր Թորոսիչին:

Ցուցահանդեսի բովանդակության և ցուցանմուշների մասին պատմեց դրա հեղինակ Հաննա Կուպչինսկա-Կլոսը: Հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ ներկայացրեցին նաև Թոմաշ Կուբա Կոզլովսկին, ում շնորհիվ ցուցադրության մեջ ներառ-

wicz – apteki i uzdrowiska Galicji”, przygotowaną przez Fundację Kultury i Dziedzictwa Ormian Polskich. Ekspozycja poświęcona jest jednemu z najwybitniejszych przedstawicieli ormiańskiej inteligencji XIX wieku, farmaceucie i pionierowi balneologii.

O przygotowaniu wystawy i prezentowanych zabytkach opowiedziała jej autorka Hanna Kopczyńska-Kłós. Wprowadzenie uzupełnili Tomasz Kuba Kozłowski, dzięki któremu na ekspozycji znalazły się unikalne naczynia do picia wód mineralnych, oraz Maria Ohanowicz-Tarasiuk, prezes Fundacji.

Organizatorzy podziękowali gościom za udział w wernisażu i zapowiedzieli dalsze publikacje przybliżające dorobek Teodora Torosiewicza.

Koncert poświęcony Awetikowi Isahakjanowi i Wahanowi Terianowi w Warszawie

■ W Duszpasterstwie Środowisk Twórczych przy Placu Teatralnym 18 w Warszawie odbył się 30 listopada koncert dedykowany dwóm wybitnym postaciom kultury ormiańskiej: Awetikowi Isahakianowi oraz Wahanowi Terianowi. Organizatorem wydarzenia była Organizacja Młodzieży Ormiańskiej w Polsce.



Fot. Fot. Facebook/OMO

Wieczór wypełniły poezja, pieśni i muzyka inspirowane twórczością obu poetów, których dorobek zajmuje szczególne miejsce w ormiańskiej literaturze.

Powołanie Pracowni Dziejów Ormian Polskich im. Sadoka Barącza na Uniwersytecie Jagiellońskim

■ Rada Naukowa Instytutu Historii Uniwersytetu Jagiellońskiego podjęła 3 grudnia decyzję o utworzeniu Pracowni Dziejów Ormian Polskich im. Sadoka Barącza oraz pozytywnie zaopiniowała kandydaturę prof. Krzysztofa Stopki na jej kierownika. Tym samym najstarsza polska uczelnia potwierdziła gotowość rozwijania badań armenologicznych na poziomie akademickim, istotnych zarówno dla nauki polskiej, jak i dla mniejszości ormiańskiej w Polsce.

Pracownia będzie prowadzić badania dotyczące historii, kultury i dziedzictwa Ormian w Polsce oraz w regionie Europy Środkowo-Wschodniej, wspierać projekty publikacyjne, organizować konferencje.

Powstanie Pracowni im. Sadoka Barącza stanowi ważny krok dla stabilnego rozwoju badań armenologicznych w Polsce oraz umocnienia dziedzictwa mniejszości ormiańskiej w przestrzeni akademickiej.

վել էին հանքային ջրի ըմպման եզակի անոթներ, և Մարիա Օհանովիչ-Տարասյուկը՝ Հիմնադրամի նախագահը:

Կազմակերպիչները երախտագիտություն հայտնելով ներկաներին՝ ցուցահանդեսի բացման արարողությանը մասնակցելու համար, տեղեկացրին, որ նախատեսվում են հետագա հրապարակումներ՝ նրվիրված Թեոդոր Թորոսևիչի գիտական ժառանգության ներկայացմանը:

Համերգ Վարշավայում՝ նվիրված Ավետիք Իսահակյանին և Վահան Տերյանին

■ Նոյեմբերի 30-ին, Վարշավայի թատրոնի հրապարակում գործող Ստեղծագործական միջավայրերի հոգևոր հովանավորության կենտրոնում տեղի ունեցավ համերգ, որը նվիրված էր հայկական մշակույթի երկու մեծանուն ներկայացուցիչներին՝ Ավետիք Իսահակյանին և Վահան Տերյանին: Միջոցառումը կազմակերպել էր Լեհաստանի Հայ երիտասարդության կազմակերպությունը:

Երեկոն լեցուն էր պոեզիայով, երգերով և երաժշտությամբ, որոնք ներշնչված էին երկու հայ դասականների ստեղծագործական ժառանգությամբ: Իսահակյանի և Տերյանի տեղը հայկական գրականության պատմության մեջ բացառիկ է, և համերգը հնարավորություն տվեց ժամանակակից լսարանին մոտենալ նրանց արվեստի գեղեցկությանն ու խորությանը:

Յագեդնյան համալսարանում բացվեց Սադոկ Բարանչի անունը կրող Լեհահայերի պատմության ուսումնագիտական կենտրոնը

■ 2025 թ. դեկտեմբերի 3-ին Յագեդնյան համալսարանի Պատմության ինստիտուտի Գիտական խորհուրդը որոշեց հիմնել Լեհահայերի պատմության ուսումնագիտական կենտրոն՝ Սադոկ Բարանչի անունով, և միաձայն հավանություն տվեց այն ղեկավարելու վերաբերյալ պրոֆեսոր Քշիշտոֆ Ստոպկայի թեկնածությանը: Այս որոշմամբ Լեհաստանի ամենահին և հեղինակավոր համալսարանն ընդգծեց իր պատրաստակամությունը խորացնելու և զարգացնելու հայագիտական ուսումնասիրությունները՝ կարևորելով դրանց դերը ինչպես լեհական գիտական մոթի, այնպես էլ Լեհաստանում ապրող հայկական համայնքի համար:

Կենտրոնի գործունեությունը կներառի Լեհաստանի և Կենտրոնական-Արևելյան Եվրոպայի հայության պատմության, մշակույթի և հոգևոր ժառանգության խորքային ուսումնասիրություն: Այն հանդես կգա որպես գիտական նախաձեռնությունների հարթակ՝ աջակցելով հրապարակումներին, գիտաժողովների ու ուսումնասիրությունների կազմակերպմանը:

Սադոկ Բարանչի անվան կենտրոնի ստեղծումը նշանակալի քայլ է հայագիտական հետազոտությունների կայուն զարգացման ու հայկական համայնքի պատմամշակութային ժառանգության արժևորման գործում՝ ամրապնդելով դրա ներկայությունը բարձրագույն ակադեմիական միջավայրում:


ARTYKUŁY NAUKOWE, KULTURALNE
ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՂՎԱԾՆԵՐ



**O ARMENII I JĘZYKU ORMIAŃSKIM.
WYWIAD Z ARMENISTĄ
PROFESOREM ANDRZEJEM PISOWICZEM
ROZMAWIAŁ DR TOMASZ KRZYŻOWSKI**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԳՎԻ ՄԱՍԻՆ.
ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑ ՀԱՅԱԳԵՏ
ՊՐՈՖԵՍՈՐ ԱՆԶԵՅ ՊԻՍՈՎԻՉԻ ՀԵՏ
ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑԸ ՎԱՐԵՑ ԴՈԿՏՈՐ ԹՈՍԱՇ ԲՇԻԺՈՎԱԿԻՆ**

BIOGRAFIA ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ANDRZEJ PISOWICZ
ԱՆՁԵՅ ՊԻՍՈՎԻՉ

Profesor Andrzej Pisowicz (ur. 1940) – polski orientalista związany z Uniwersytetem Jagiellońskim specjalizuje się w języku ormiańskim i perskim. W latach 1957-1961 studiował iranistykę na Uniwersytecie Jagiellońskim, a następnie – jako pierwszy Polak – odbył w latach 1961-1963 studia z filologii ormiańskiej na Uniwersytecie Erywańskim. Wiedzę uzupełniał podczas studiów zagranicznych w Paryżu i Teheranie. W 1974 roku uzyskał doktorat, a w 1985 roku habilitację. W 2002 roku został profesorem.

Dorobek naukowy uczonego obejmuje ponad 220 publikacji, w tym monografie, słownik, gramatykę, przekłady literatury ormiańskiej na język polski, a także liczne opracowania z zakresu fonologii i dialektologii ormiańskiej. Równolegle prowadzi działalność popularyzatorską i społeczną i aktywnie uczestniczy w życiu kulturalnym społeczności ormiańskiej w Polsce: prowadzi kursy języka ormiańskiego, tłumaczy teksty literackie, występuje w mediach oraz na forum publicznym, popularyzuje wiedzę o języku, historii i kulturze Armenii.

Profesor Andrzej Pisowicz za swoją działalność był wielokrotnie nagradzany, m.in. Złotym Krzyżem Zasługi oraz Dyplomem Honorowym Ministerstwa Diaspory Republiki Armenii za „znaczący wkład w dzieło rozwijania i promowania kultury ormiańskiej”.



Dyplom Honorowy
Ministerstwa Diaspory
Republiki Armenii
(2010)

Հայաստանի
Հանրապետության
սփյուռքի
Նախարարության
պատվով դիպլոմ
(2010)

Պրոֆեսոր Անջեյ Պիսովիչը (ծնված 1940 թ.) լեի արևելագետ է, որը համագործակցում է Յագեյլոնյան համալսարանի հետ, մասնագիտացած է հայերենի և պարսկերենի մեջ: 1957-1961 թվականներին Յագեյլոնյան համալսարանում ուսումնասիրել է իրանագիտություն, ապա՝ որպես առաջին լեի, 1961-1963 թվականներին բանասիրական ուսում է ստացել Երևանի Պետական համալսարանում: Արտասահմանում սովորելու տարիներին խորացրել է իր գիտելիքները մասնավորապես Փարիզում և Թեհրանում: Անջեյ Պիսովիչը ստացել է դոկտորի կոչում 1974 թվականին, իսկ հաջորդապես (անկախ գիտական հետազոտություն վարողի և պրոֆեսորի կոչում)՝ 1985 թվականին: Նա պրոֆեսոր է դարձել 2002 թվականին:

Անջեյ Պիսովիչի գիտական ժառանգությունը ներառում է ավելի քան 220 հրատարակություն, այդ թվում՝ մենագրություններ, բառարան, քերականություն, հայ գրականության լեհերեն թարգմանություններ, ինչպես նաև բազմաթիվ ուսումնասիրություններ՝ սվիդված հայերենի հնչյունաբանության և բարբառագիտության հարցերին: Չուզահեռաբար նա աստիճանաբար հայտնի է դառնում իր հասարակական և հասարակայնական գործունեությամբ և ակտիվորեն մասնակցում է Լեհաստանում հայ համայնքի մշակութային կյանքին: Վարում է հայերենի դասընթացներ, թարգմանում է գրական տեքստեր, հանդես է գալիս լրատվամիջոցներում և հանրային հարթակներում, ինչպես նաև մեծապես խթանում է հայերեն լեզվի, հայոց պատմության և մշակույթի իմացությունը:

Պրոֆեսոր Անջեյ Պիսովիչը իր գործունեության համար արժանացել է բազմաթիվ պարգևների, այդ թվում՝ «Ոսկե Խաչ», ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սփյուռքի Նախարարության պատվավոր դիպլոմ՝ «հայ մշակույթի զարգացման և տարածման գործում նշանակալի ներդրման համար»:



Fot. primeminister.am



Fot. mickiewicz.net



Fot. wikimedia.org

**Andrzej Pisowicz – uczeń szkoły średniej
Անջեյ Պիսովիչը՝ ավագ դպրոցի աշակերտ**


**Miejsce urodzenia Andrzeja Pisowicza:
Siedliska pod Miechowem, Gmina Miechów, Polska
Անջեյ Պիսովիչի ծննդավայրը՝ Միեխովի
համայնքում գտնվող Սեդլիսկա գյուղը,
Միեխովի գավառ, Լեհաստան**

**II Liceum Ogólnokształcące im. Adama
Mickiewicza w Słupsku, do którego uczęszczał
Andrzej Pisowicz**

**Սլուպսկ քաղաքում գտնվող Ադամ Միցկևիչի
անվան միջնակարգ դպրոցը, ուր հաճախել է
Անջեյ Պիսովիչը**

**Andrzej Pisowicz ukończył w 1963 roku Wydział
Filologii Orientalnej Uniwersytetu Jagiellońskiego
w Krakowie.**

**Անջեյ Պիսովիչը 1963 թվականին ավարտել
է Կրակովի Յագելոնյան համալսարանի
արևելագիտական ֆակուլտետը**



Prof. Andrzej Pisowicz
z ks. Tadeuszem Isakowiczem-Zaleskim, (2008)

Պրոֆ. Անջեյ Պիսովիչը
հայր Թադեոս Իսակովիչ-Չալեսկուի հետ (2008)

– Kiedy zainteresował się Pan językiem ormiańskim?

– Podczas studiów orientalistycznych na Uniwersytecie Jagiellońskim przez dwa lata uczyłem się biernie języka zachodnioormiańskiego. Dyrektor Instytutu Orientalistyki Tadeusz Lewicki poprosił ormiańskiego księdza Kazimierza Roszkę z Gliwic, żeby raz w tygodniu prowadził lektorat języka ormiańskiego. Byłem zafascynowany różnymi orientalnymi językami, dlatego zapisałem się na te zajęcia.

– W 1961 roku rozpoczął Pan studia z filologii ormiańskiej na Uniwersytecie w Erywanii. Jak wyglądał przebieg studiów?

– W 1960 roku profesor Tadeusz Lewicki zaprosił do Krakowa prof. Wacze Nalbandiana z Uniwersytetu Erywańskiego, który przeprowadził dla studentów orientalistyki cykl wykładów w języku rosyjskim poświęconych starożytnej literaturze ormiańskiej z V wieku. Wtedy bardzo zainteresowałem się armenistyką i zwróciłem się do prof. Nalbandiana czy mógłbym pojechać do Armenii na studia. Po ukończeniu w Krakowie czterech lat iranistyki pojechałem w 1961 roku do Armenii. Rozpocząłem tam właściwie studia specjalistyczne, w trybie indywidualnym, a nie pełne studia filologiczne. Na pierwszym etapie nie było możliwe, żebym studiował jak Ormianie ponieważ czynnie nie posługiwałem się językiem ormiańskim. Jak przyjechałem do Erywanii porozumiewałem się po rosyjsku, ale starałem się jak najszybciej przejść na ormiański. Dopiero, kiedy zacząłem mówić po ormiańsku uczęszczałem na normalne zajęcia dla studentów. Dodam, że podczas pobytu

– Երբ սկսեցիք հետաքրքրվել հայոց լեզվով:

– Յագելոնյան համալսարանում արևելագիտությունը սովորելիս ես երկու տարի հնարավորություն ունեցա պասիվ կերպով ուսումնասիրել արևմտահայերեն:

Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Թադեոս Լևիցկին խնդրեց Գլիվիցեից հայ կաթոլիկ քահանա Կազիմեոս Ռոշկային շաբաթը մեկ անգամ հայոց լեզվի դասընթացներ անցկացնել: Ես հիացած էի տարբեր արևելյան լեզուներով, ուստի գրանցվեցի դասընթացներին:

– 1961 թվականին Դուք սկսեցիք հայ բանասիրությունն ուսումնասիրել Երևանի համալսարանում: Ինչպիսին էր ձեր ուսումնառության ծրագիրը:

– 1960 թվականին պրոֆեսոր Թադեոս Լևիցկին Երևանի Պետական համալսարանի պրոֆեսոր Վաչե Նալբանդյանին հրավիրեց Կրակով, որտեղ Նա արևելագիտության ուսանողների համար ռուսերենով դասախոսությունների շարք անցկացրեց՝ նվիրված հինգերորդ դարի հին հայկական գրականությանը: Այդ ժամանակ ես լրջորեն հետաքրքրվեցի հայագիտությամբ և դիմեցի պրոֆեսոր Նալբանդյանին՝ հարցնելով՝ հնարավոր է արդյոք մեկնել Չայաստան ուսանելու նպատակով: Կրակովում իրանագիտության չորս տարվա ուսումնառության ավարտելուց հետո՝ 1961 թվականին մեկնեցի Չայաստան: Այնտեղ սկսեցի մասնագիտացված, անհատական ուսումնասիրություններ, այլ ոչ թե ամբողջությամբ բանասիրական ուսումնասիրություններ: Սկզբնական փուլում հնարավոր չէր սովորել ինչպես հայ ուսանողները, քանի որ ակտիվորեն չէի խոսում հայերեն: Երբ ժամանեցի Երևան, հաղորդակցվում էի ռուսերենով, սակայն ամեն կերպ փորձում էի որքան հնարավոր է շուտ անցնել հայերենի: Միայն այն ժամանակ, երբ սկսեցի հայերեն խոսել, սկսեցի հաճախել ուսանողների համար նախատեսված կանոնավոր դասընթացների: Ավելացնեմ, որ Չայաստանում ապրելու ընթացքում ապրում էի ուսանողական հանրակացարանում, որը գտնվում էր Ստալինի փողոցի 52 հասցեում (ներկայում՝ Մեսրոպ Մաշտոցի պողոտա), սկզբում բուլղարահայ ուսանողների հետ, իսկ հետագայում՝ իմ անձնական խնդրանքով, ինձ տեղափոխեցին մի սենյակ, որտեղ ապրում էին տեղացի հայեր: Ինձ համար կարևոր էր հաղորդակցվել հատկապես արևելահայերի հետ և բարելավել իմ լեզվական կարողությունները:

– Ինչ դասընթացների էիք հաճախում:

– Սկզբում ես անհատական հայերենի դասեր էի ստանում հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գուրգեն Սևակից: Ժամանակի ընթացքում սկսեցի հաճախել հայոց քերականության, հայ գրականության պատմության, հայ բարբառագիտության և այլնի դասընթացների: Նաև հաճախում էի Պետական Մանկավարժական ինստիտուտ, որտեղ հայ գրականությանը վերաբերող դասախոսություններն ընթանում էին ռուսերենով: Մեկ կիսամյակ ես դասախոսությունների էի հաճախում այս անգամ հայերենով, գրաբարի կամ



Z wizytą u malarza Martirosa Sariana, Andrzej Pisowicz pierwszy z prawej, Erywań (1962)

Այցելություն նկարիչ Մարտիրոս Սարյանին. Անջեյ Պիսովիչը՝ աջից առաջինը, Երևան (1962)



Prof. Gurgjen Sewak
Պրոֆ. Գուրգեն Սևակ

w Armenii mieszkałem w domu akademickim przy ulicy Stalina 52 (obecnie Mesropa Masztoca), najpierw z Ormianami z Bułgarii, a potem na własną prośbę przeniesiono mnie do pokoju, gdzie mieszkali miejscowi Ormianie. Zależało mi na możliwości komunikowania się właśnie z Ormianami wschodnimi i szlifowania języka.

- Na jakie zajęcia Pan uczęszczał?

- Początkowo indywidualnych lekcji ormiańskiego udzielał mi kierownik Katedry Języka Ormiańskiego profesor Gurgjen Sewak. Z biegiem czasu zacząłem chodzić na zajęcia z gramatyki języka ormiańskiego, z historii literatury ormiańskiej, dialektologii ormiańskiej itd. Uczęszczałem też na wykłady do Wyższej Szkoły Pedagogicznej, gdzie były prowadzone zajęcia

հին հայոց լեզվի վերաբերյալ: Դա ինձ համար շատ կարևոր էր, քանի որ ինչպես ռոմանագետը պետք է տիրապետի լատիներենին՝ որպես ռոմանական լեզուների սկզբնաղբյուր լեզու, այնպես էլ հայագիտական ուսումնասիրությունների մասնագետը պետք է ունենա դասական հայերենի տարրական իմացություն և առնվազն որոշակի ըմբռնում դրանով գրված տեքստերի վերաբերյալ:

- Դուք տիրապետում եք բազմաթիվ լեզուների: Կարո՞ղ եք առաջարկել արդյունավետ ուսուցման մեթոդ: Չէ՞ որ բոլորը հանճար չեն: Ինչպե՞ս հասնել արդյունավետության:

- Թույլ տվեք ձեզ մի օրինակ բերել: Երբ ես ժամանեցի Երևան, այնտեղ արդեն մեկ տարի ուսանում էր մի հունգարացի՝ Պալ Սալվաչին, որը զբաղվում էր հին Հայաստանի պատմության ուսումնասիրությամբ: Նա հաղորդակցվում էր հայերի հետ ռուսերեն: Հարցրեցի՝ ինչպե՞ս է նրա հայերենի իմացությունը: Պատասխանեց, որ սովորում է, բայց միայն պասիվ ձևով, և երբ ճիշտ սովորի, այն ժամանակ կսկսի խոսել: Բայց ես գիտեի, որ այդ ճանապարհը սխալ է: Մի քանի շաբաթ անց սկսեցի խոսել հայերի հետ հայերենով, իհարկե՝ սխալներով, բայց հասկացա, որ օտար լեզու սովորելու այլ ուղի պարզապես չկա: Հետո հունգարացին նույնպես սկսեց խոսել: Ես նրան օրինակ ցույց տվեցի, թե ինչպես պետք է սովորել: Մարդ պետք է հրաժար-



Andrzej Pisowicz (pierwszy z prawej)
w gronie ormiańskich znajomych, Erywań (1962)

Անդրէ Պիսովիչը (աջից առաջինը)
հայ ընկերների հետ, Երևան (1962)


w języku rosyjskim na temat literatury ormiańskiej. Przez jeden semestr chodziłem na wykłady – już w języku ormiańskim – z grabaru, czyli języka staroor-miańskiego. Było to dla mnie ważne, bo tak jak romanista musi mieć pojęcie o łacinie jako języku wyjściowym języków romańskich, analogicznie armenista musi znać podstawy klasycznego języka ormiańskiego i przy-najmniej do pewnego stopnia rozumieć teksty w nim napisane.

– Zna Pan Profesor wiele języków. Czy może Pan polecić skuteczną metodę nauki? Nie każdy jest geniuszem, co zrobić, żeby nauka była efektywna?

– Odwołam się do przykładu. Kiedy przyjechałem do Erywania od roku studiował tam jeden Węgier – Pál Szalmási, który zajmował się historią starożytnej Armenii. Z Ormianami porozumiewał się po rosyjsku. Zapytałem go jak stoi ze znajomością ormiańskiego. Odpowiedział, że się uczy, ale tylko biernie i jak się porządnie nauczy to wtedy zacznie mówić. Ja wiedziałem, że nie tędy droga i zacząłem po kilku tygodniach mówić z Ormianami po ormiańsku, oczywiście z błędami, ale wiedziałem, że inaczej nie da się nauczyć języka obcego. Wtedy ten Węgier też zaczął mówić; dałem mu przykład jak się uczyć. Droga perfekcjonizmu jest błędna, trzeba – moim zdaniem – jak najbardziej aktywnie podejść do tej sprawy. Usiłować mówić jak tylko to



Podczas zwiedzania w Zwartnoc (1962)
Զվարթնոցի շրջայցի ժամանակ (1962)



Przed domem studentów ormiańskich w Paryżu (1966)
Շայ ուսանողների տան առջև, Փարիզ (1966)

jest możliwe, nawet z błędami w prymitywny sposób. Tylko tą drogą robi się postępy.

- Przez dwa lata mieszkał Pan w Erywaniu, jak zapamiętał Pan Armenię sprzed 60 lat?

- Mam dużo ciekawych wspomnień z tego okresu. Przede wszystkim zapamiętałem, że było bardzo ciepło i słonecznie, co mnie ucieszyło, bo w Moskwie, przez którą przejeżdżałem jadąc do Erywania, było bardzo chłodno. W Erywaniu moją uwagę zwróciły napisy na murach (tzw. graffiti) – Lenin i Stalin to przyjaciele. To mnie zszokowało, dlatego pytałem moich kolegów co to oznacza. Jak mi wyjaśniono, były to buntownicze napisy przeciwko propagandzie antystalinowskiej Nikity Chruszczowa, który przedstawiał Stalina jako zbrodniarza. Napisy miały temu przeczyć. Ich autorzy i wielu ludzi w Armenii uważali, że Stalin robiąc czystki postępował sprawiedliwie, bo swoich rodaków – Gruzinów, traktował tak samo jak innych obywateli Związku Radzieckiego. Dziwiło mnie to bardzo, bo trzeba pamiętać, że w czystkach stalinowskich represjom podlegało 20 000 inteligentów ormiańskich.

Po przyjeździe do Armenii zdziwiło mnie też zupełnie inne podejście do alkoholu, bo nigdy na ulicach nie widziałem ludzi pijanych. To jest kultura krajów wina. W tych krajach uważa się, że objawem męskości jest to, że ktoś pije, ale się później nie zatacza, bo gdyby się tak stało to byłoby to kompromitujące.

- Co Pan robił w czasie wolnym od zajęć uniwersyteckich?

- Uprawiałem kulturystykę, chodziłem na siłownię i podnosiłem ciężary. Spotykałem się też ze znajomymi. Ważny był dla mnie kontakt z Wartanem Grigorianem. To był historyk związany zawodowo z Matenadaranem – ważnym ośrodkiem kulturowym Armenii. Grigorian zajmował się historią Ormian w Polsce i dowiedział się, że w akademiku mieszka student z Polski. Nawiązał ze mną kontakt i współpracę. Napisaliśmy wspólnie artykuł na temat źródeł polskich pisanych alfabetem ormiańskim przechowywanych w Matenadaranie.



Z rodziną Wartana Grigoriana, Armenia (1971)
Վարդան Գրիգորյանի ընտանիքի հետ, Հայաստան (1971)

վի կատարելապաշտությունից. իմ կարծիքով, պետք է առավելագույնս ակտիվ մոտեցում ցուցաբերել այս հարցում: Պետք է փորձել խոսել՝ որքան հնարավոր է շուտ, թեկուզ սխալներով, թեկուզ պարզունակ ձևով: Միայն այդ ճանապարհով հնարավոր է առաջընթաց արձանագրել:

- Դուք երկու տարի ապրել եք Երևանում, ինչպիսիք եք հիշում 60 տարի առաջվա Հայաստանը:

- Այդ շրջանից շատ հետաքրքիր հիշողություններ ունեմ: Առաջին հերթին հիշում եմ, որ շատ տաք և արևոտ էր, ինչը ինձ ուրախացրեց, որովհետև Մոսկվայում, որով անցնում էի Երևան գնալիս, շատ ցուրտ էր: Երևանում ուշադրությունս գրավեցին պատերին եղած գրությունները (այսպես կոչված գրաֆիտները)՝ «Լենինն ու Ստալինը ընկերներ են»: Դա ինձ ցնցեց, և ես հարցրի իմ ընկերներին, թե ինչ է դա նշանակում: Ինչպես ինձ բացատրեցին, դրանք ըմբոստ գրություններ էին՝ ուղղված Նիկիտա Խրուշչովի հակաստալինյան քարոզչության դեմ, որը Ստալինին ներկայացնում էր որպես հանցագործ: Այդ գրությունները նպատակ ունեին հակառակն ապացուցել: Դրանց հեղինակները և Հայաստանում շատ մարդիկ կարծում էին, որ Ստալինը, իրականացնելով գտումները, արդար էր վարվում, քանի որ իր հայրենակիցներին՝ վրացիներին, նույն կերպ էր վերաբերվում, ինչպես Խորհրդային Միության մյուս քաղաքացիներին: Դա ինձ շատ էր զարմացնում, որովհետև պետք է հիշել, որ ստալինյան գտումների ընթացքում շուրջ 20.000 հայ մտավորականներ են թարկվել են բռնաճնշումների:

Հայաստան ժամանելուն պես ինձ զարմացրեց նաև ակրիոլի նկատմամբ բուրդովին այլ վերաբերմունքը, որովհետև փողոցներում երբեք հարբած մարդկանց չէի տեսնում: Դա գիտու երկրների մշակույթն է: Այս երկրներում խմելը, բայց հետո չտատանվելը համարվում է տղամարդկության նշան, քանի որ եթե դա անելի, ամոթալի կլիներ:

- Ինչ էիք անում համալսարանական դասերից ազատ ժամանակ:



Na wyspie Chark w Iranie (1973)
Խարկ կղզում, Իրան (1973)

– Studia z języka ormiańskiego kontynuował Pan na prestiżowych uczelniach w Paryżu. Proszę o tym opowiedzieć.


– Zależało mi na zapoznaniu się z zachodnim wariantem języka ormiańskiego. Dzięki stypendium Fundacji Gulbenkiana w 1966 roku pojechałem do Paryża. W Szkole Żywych Języków Orientalnych uczęszczałem na zajęcia do profesora Frédéric Feydit oraz na lektorat, który prowadził Charles Boyadjian (Ormianin z Libanu). Kontynuowałem też naukę grabaru w Instytucie Katolickim u ojca Charles'a Merciera.

– Jaka jest różnica między językiem wschodnio- i zachodnioormiańskim?

– Oba języki są do siebie podobne. Można się w ogóle zastanawiać czy są to dwa języki czy jeden język w dwóch wariantach. Ormianie kładą nacisk na to, żeby nazywać to wariantami. Pewną rolę odgrywają też sentymenty – jesteśmy jednym narodem, więc mamy jeden język. Można się z tym zgodzić, bo jakieś 80-90 procent słownictwa jest wspólna, to są te same słowa, tylko różnica jest – poza istotnymi różnicami gramatycznymi – w fonetyce. Jest to bardzo ciekawa rzecz, czasem trudna do wyobrażenia. Najlepiej widać to na imionach: we wschodnim wariantcie mówimy Pohos – Paweł, w zachodnim – Bohos. Jest to pewna przeszkoda w komunikacji, ale osoby posługujące się różnymi wariantami mogą się porozumieć.

– Jakie zagadnienie z języka ormiańskiego podejmował Pan w swoich badaniach naukowych?

– Po wspomnianym artykule opublikowanym z Watanem Grigorianem, który był moim debiutem zainteresowałem się dialektologią ormiańską. Wzięło się to stąd, że kiedy uczyłem się języka literackiego wschodnioormiańskiego zauważyłem, że ludzie w mowie potocznej mówią znacznie inaczej. Jak się dowiedziałem mówili oni tzw. dialektem erywańskim. Armenia jest



Na tle Wielkiego Meczetu w Isfahanie, Iran (1973)
Խսֆահանի Մեծ մզկիթի ֆոնին, Իրան (1973)

– Ես զբաղվում էի մարմնամարզությամբ, մարզասրահ էի գնում և ծանրամարտով զբաղվում: Նաև հանդիպում էի ընկերներին հետ: Ինձ համար շատ կարևոր էր շփումը Վարդան Գրիգորյանի հետ: Նա պատմաբան էր, մասնագիտորեն կապված Մատենադարանի՝ Հայաստանի կարևոր մշակութային կենտրոններից մեկի հետ: Գրիգորյանը զբաղվում էր Լեհաստանում հայերի պատմությամբ և տեղեկացել էր, որ հանրակացարանում ապրում է Լեհաստանից եկած ուսանող: Նա կապ հաստատեց ինձ հետ, և մենք սկսեցինք համագործակցել: Համատեղ հողված գրեցինք Մատենադարանում պահպանվող՝ հայատառ այբուբենով գրված լեհական աղբյուրների մասին:

– Հայերենի ուսումնասիրությունը շարունակել էք նաև Փարիզի հեղինակավոր ուսումնական հաստատություններում: Խնդրում եմ պատմել այդ մասին:

– Ինձ համար կարևոր էր ծանոթանալ հայերենի արևմտյան տարբերակին: Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի կրթաթոշակի շնորհիվ 1966 թվականին մեկնեցի Փարիզ: Արևելյան կենդանի լեզուների դպրոցում հաճախում էի պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդիթի դասերին, ինչպես նաև լեզվի դասընթացների, որոնք վարում էր Շառլ Բոյաջյանը (լիբանանահայ): Մինևույն ժամանակ շարունակեցի գրաբարի ուսումնասիրությունը Կաթոլիկ ինստիտուտում հայր Շառլ Մերսիեի ղեկավարությամբ:

– Ինչ տարբերություն կա արևելահայերենի և արևմտահայերենի միջև:

– Երկու լեզուները միմյանց շատ նման են: Կարելի է նույնիսկ մտածել, թե դրանք երկու լեզու են, թե մեկ լե-




Promocja doktorska na Uniwersytecie Jagiellońskim (1974)
Դոկտորական աստիճանի շնորհման արարողություն
Յագելոնյան համալսարանում (1974)

զու՝ երկու տարբերակով: Հայերը շեշտը դնում են այն բանի վրա, որ դրանք կոչվեն տարբերակներ: Որոշ դեռ ունեն նաև զգացմունքները՝ մենք մեկ ժողովուրդ ենք, հետևաբար ունենք մեկ լեզու: Դրան կարելի է համաձայնել, բանի որ բառապաշարի մոտավորապես 80-90 տոկոսը ընդհանուր է, դրանք նույն բառերն են: Միակ տարբերությունը՝ բացի էական քերականական տարբերություններից, հնչյունաբանությունն է: Դա շատ հետաքրքիր երևույթ է, երբեմն դժվար պատկերացվող: Ամենալավը դա երևում է անձնանունների վրա. արևելյան տարբերակում ասում ենք Պողոս-Պավել, արևմտյանում՝ Բողոս: Սա որոշակի խոչընդոտ է հաղորդակցության համար, բայց տարբեր տարբերակներով խոսող մարդիկ կարող են հասկանալ միմյանց:

- Հայերենի դժվարությունները քաղաքացիական հետազոտությունում:

- Վարդան Գրիգորյանի հետ համատեղ հրապարակված հիշատակված հոդվածից հետո, որը իմ գիտական դեբյուտն էր, սկսեցի հետաքրքրվել հայ բարբառագիտությամբ: Սա բխում էր այն փաստից, որ արևելահայերենի գրական լեզուն ուսումնասիրելիս նկատեցի, որ մարդիկ զգալիորեն տարբեր կերպ են խոսում առօրյա խոսքում: Ինչպես հետո իմացա, նրանք խոսում էին այսպես կոչված երևանյան բարբառով: Հայաստանը տարածքով մեծ երկիր է, նկատի ունեմ նաև Արևմտյան Հայաստանը, որը ներկայում գտնվում է Արևելյան Թուրքիայի տարածքում, ինչպես նաև հարավարևելյանը՝ Իրանի տարածքում: Դրանք լեռնային շրջաններ են, իսկ լեռները նպաստում են բարբառային բաժանումների: Ինչպես իմացա, Հայաստանում կա մոտ հիսուն բարբառ, ինչը ինձ շատ հետաքրքրեց և դարձավ իմ գիտական մասնագիտացումը: Ես նաև ուսումնասիրեցի այս թեման իմ մագիստրոսական թեզի համար: Խնդրեցի պրոֆեսոր Գուրգեն Սևակին, որ խորհուրդ տա մի գյուղ, որտեղ բարբառը շատ դժվար չլիսի, որպեսզի կարողանամ մարդկանց հետ հաղորդակցվել: Այդպես գնացի Փարպի գյուղ, որի բարբառը մոտ էր գրական լեզվին: Հավաքված նյութը օգտագործեցի մագիստրոսական աշխատանքում: Հետագայում հետաքրքրվեցի նաև բաղաձայնների հնչյունափոխություններով: Այդ մասին արդեն նշել եմ՝ խոսելով արևելահայ և արևմտահայ լեզվի տարբերությունների բնարկման ժամանակ:



Artykuł A. Pisowicza i W. Grigoriana o źródłach ormiańskich
Ա. Պիսովիչի և Վ. Գրիգորյանի հոդվածը հայկական աղբյուրների մասին

- Դուք նաև հետաքրքրված էիք Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ Կուտիում հայերի խոսած բարբառով: Որն է այս լեզվի առանձնահատկությունները, և կամ արդյոք էական տարբերություններ ժամանակակից հայերենի համեմատ:

- Լեհահայերի բարբառը մինչև 1945 թվականը գործածվում էր հիմնականում Կուտի քաղաքում: Պատերազմից հետո այն հայերի փոքր խումբը, որը այնտեղից տեղափոխվեց և բնակություն հաստատեց Սիլվեստրայում, դեռ հիշում էր այդ լեզուն: Այդպիսի մարդկանցից մեկը Աննա Մոյզեսովիչն էր Կատովիցե քաղաքից, որը միայն խոսում էր, բայց չէր կարող գրել հայե-




Mały słownik ormiańsko-polski, polsko-ormiański, Kraków (2006)

Հայերեն-լեհերեն և լեհերեն-հայերեն փոքր բառարան, Կրակով (2006)



Gramatyka Ormiańska (grabar-aszcharabar), Andrzej Pisowicz (2014)

Հայերենի քերականություն (Գրաբար-Աշխարաբար), Անջեյ Պիսովիչ (2014)



Wspomnienia prof. Andrzeja Pisowicza (2023)

Պրոֆեսոր Անջեյ Պիսովիչի հիշողությունները (2023)

obszernym terenem, mam na myśli też Armenię Zachodnią obecnie na obszarze Wschodniej Turcji i południowoschodnią na terenie Iranu. Są to obszary górskie, a góry sprzyjają podziałom dialektalnym. Jak się dowiedziałem w Armenii jest około pięćdziesięciu dialektów, to mnie bardzo zaintrygowało i stało się moją specjalnością naukową. Z tej tematyki zbierałem też materiały do pracy magisterskiej. Poprosiłem profesora Gurgena Sewaka, aby polecił mi jakąś wieś, w której dialekt nie byłby zbyt trudny, żebym się dogadał z ludźmi. Dzięki temu udałem się do wsi Pharpi, której dialekt był zbliżony do języka literackiego. Zebrany materiał wykorzystałem w pracy magisterskiej. Później zainteresowałem się przesuwkami spółgłoskowymi. Już o tym wspominałem przy okazji różnic we wschodnim i zachodnim wariantcie języka ormiańskiego.

– Interesował się też Pan dialektem, którym posługiwali się przed II wojną światową Ormianie w Kutach. Na czym polega specyfika tego języka czy są duże różnice w porównaniu ze współczesnym językiem ormiańskim?

– Dialekt Ormian polskich był używany do 1945 roku głównie w miejscowości Kuty. Po wojnie garstka Ormian, która stamtąd przyjechała i osiedliła się na Śląsku pamiętała jeszcze ten język. Jedną z takich osób była Anna Mojzesowicz z Katowic, która tylko mówiła, ale nie umiała pisać po ormiańsku. Kilka razy ją odwiedziłem, rozmawiałem z nią i nagrywałem. Jest to jeden z dialektów z grupy zachodnioormiańskiej, spokrewniony z dialektem, którym posługiwali się Ormianie w Rumunii. Ktoś kto włada językiem zachodnioormiańskim powinien się dogadać z osobą posługującą się wspomnianymi dialektami: Ormian w Polsce czy Rumunii. Wyniki moich badań o dialekcie z Kut zaprezentowałem na



Artykuł z „Tygodnika Powszechnego” «Տիգոդնիկ Փովշեխի» հոդված

րեն: Ես մի քանի անգամ այցելեցի Նրան, խոսեցի Նրա հետ և ձայնագրեցի: Դա արևմտահայ բարբառների խմբին պատկանող բարբառներից մեկն է, ազգակից այն բարբառին, որով խոսում էին Ռումինիայի հայերը: Արևմտահայերենի իմացությունը հևարավորություն է տալիս հաղորդակցվելու այդ բարբառներով խոսող մարդկանց, մասնավորապես՝ Լեհաստանի և Ռումինիայի հայ համայնքների հետ: Կուտիի բարբառի վերաբերյալ իմ հետազոտությունների արդյունքները

Անշեյ Պիտվիչը Կրակովում արևմտահայերեն էր սովորեցնում երկու թուրքի գերմաներենով հայաստանում մեկնարկում են լեհական օրերը

Հայագիտական կենտրոնները եվրոպայում առավել փոքրաթիվ են, քան ամերիկյան աշխարհամասում, թեև ճուշտ էվրոպայում էլ այդ կենտրոնների բաշխվածությունը արբեր է: Այստիպիս է հայագիտության զարգացումը Եվրոպայում լեհ հայերի հայագետ, լեհերեն-հայերեն և հայերեն-լեհերեն միակ բառարանի համահեղինակներից մեկը՝ Անշեյ Պիտվիչը, որ արդեն մեկնարկած լեհական օրերի շրջանակներում Հայաստանում է: Կա լատինական և անգլիական լեզուներով լեհ գրողների:

Ունի կնիքներ ցրակնությունը: Կլիմեն Գաբի ֆիլմի ցուցադրություն, լեհական համույթի ելույթ, գրքերի ցնորհանդեսներ՝ հունիսի 8-ին եզրափակելով միջոցառումների շարքը՝ կաղված ճուշտ այդ օրը Լեհաստանում մեկնարկող եվրոֆուսբոլի առաջնության բացման հետ:

Պիտվիչը, որ խոսում էր մաքուր հայերենով, հետաքրքրական մի դասընթացում Եվրոպայացի, հիշելով, թե ինչպես է հայերեն սովորեցրել երկու թուրք առանդների: Բեռլինում ու



Պիտվիչի նախորդ այցելությունը Հայաստան կայացել է դեռևս 1961-ին, երբ դարսկերենով մասնագիտացող ուսանողին լեհական Կրակովում հայերենի ու հայաստանի մասին դասախոսությունները հետաքրքրություն են ցուցնում սովորելու այդ լեզուն: Արդեն Երևանում լեզվաբան Գուրգեն Սեւակի անհատական դասախոսություններով Պիտվիչը սամաթ թուրքը, իրենց լեհ դասախոսների հետ:

Gazeta ormiańska
Հայկական թերթ

konferencji armenistycznej w Filadelfii w 1979 roku. Aktualnie dialekt ten jest wymarły, bo nie ma już nikogo, kto by się nim posługiwał.

- Czy są jakieś inne obszary związane z językoznawstwem ormiańskim w Polsce, które warto by podjąć?

- Myślę, że w zakresie leksykografii. Wyobrażam sobie na przykład doktorat na temat słownika ormiańskości z XVIII wieku autorstwa Stefana Roszki, zawierający analizę słownictwa, kontekst powstania czy zestawienia z innymi tego typu dziełami. Poza tym są teksty kiczackie - bo Ormianie w Polsce do połowy XVII wieku posługiwali się tym językiem z grupy turkijskiej - w których specjalizuje się profesor Krzysztof Stopka i oczywiście szereg problemów związanych z historią Ormian w Polsce i relacji polsko-ormiańskich, ale to zupełnie inne wątki, nie związane z językoznawstwem.

ներկայացրել եմ Ֆիլադելֆիայում կայացած հայկական կոնֆերանսում՝ 1979 թվականին: Ներկայում այդ բարբառը մահացած է, քանի որ այլևս չկա որևէ մեկը, ով այն գործածի:

- Կան արդյոք Լեհաստանում հայ լեզվաբանության հետ կապված այլ ոլորտներ, որոնք արժե ուսումնասիրել:

- Կարծում եմ՝ դա կլինի բառարանագիտության ոլորտում: Կարելի է, օրինակ, պատկերացնել դոկտորական ատենախոսություն՝ նվիրված տամուլթերոդ դարի հայերեն-լատիներեն բառարանին, որի հեղինակը Ստեֆան Ռոշկան է, և որը կներառի բառապաշարի վերլուծությունը, ստեղծման համատեքստը, ինչպես նաև համեմատություններ ևայլատիպ այլ գործերի հետ: Բացի դրանից, կան կիսաչաղերեն տեքստեր, քանի որ Լեհաստանում ապրող հայերը մինչև տասնյոթերորդ դարի կեսերը գործածում էին այդ լեզուն, որը պատկանում է թյուրքական լեզուների խմբին: Այդ տեքստերի ուսումնասիրությամբ մասնագիտանում է պրոֆեսոր Զիչտոֆ Ստոպկան, ինչպես նաև գոյություն ունեն բազմաթիվ ինտերնետային կապված Լեհաստանում հայերի պատմության և լեհ-հայկական հարաբերությունների հետ, սակայն դրանք բոլորովին այլ թեմաներ են և կապված չեն լեզվաբանության հետ:

- Ձեր ինքնակենսագրության մեջ նաև նշվում է, որ աշխատել եք Թեհրանում Լեհաստանի դեսպանատանը: Ինչ հանգամանքներում սկսեցիք զբաղվել դիվանագիտությամբ:

- Երբ Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորվեց անկախ Հայաստանը, մտքումս ծագեց գաղափարը, որ կարող եմ ինչպես շատ այլ գիտնականներ, աշխատել դիվանագիտության ոլորտում: Դիմեցի Վարշավայում գտնվող Լեհաստանի արտաքին գործերի նախարարությանը՝ առաջարկելով իմ ծառայությունները, եթե Հայաստանում կազմակերպվել լեհական դիվանագիտական ներկայացուցչություն: Գրեցի, որ տիրապետում եմ տեղական լեզվին, իսկ հայերը շատ բարձր են գնահատում, երբ օտարերկրացին խոսում է իրենց լեզվով: Պատասխան ստացա, որ մտակա տարիներին Երևանում դիվանագիտական ներկայացուցչություն բացելու ծրագրեր չկան: Ուղարկված հարցաթերթիկում նշել էի նաև, որ գիտեմ պարսկերեն: Այդ կերպ ինձ առաջարկվեց աշխատանք Իրանում Լեհաստանի Հանրապետության դեսպանատանը: Ընդունեցի այդ առաջարկը, անցա վեցամսյա դիվանագիտական դասընթաց և մեկնեցի Թեհրան, որտեղ ստանձնեցի խորհրդականի պաշտոնը: Որոշ ժամանակ անց, սակայն, առողջական պատճառներով հրաժարվեցի այդ աշխատանքից և վերադարձա գիտական գործունեությանը Յազեթի նյան համալսարանում:

- Ձեր աշխատությունները, մասնավորապես «Հայոց լեզվի քերականությունը» և «Հայոց լեզվի փոքր բառարանը», շատ կարևոր են հայագիտական հետազոտությունների և դրանց տարածման համար: Խնդրում եմ պատմեք մեզ դրանց ստեղծման հանգամանքների մասին:



Ormiańskie Towarzystwo Kulturalne w Krakowie, od lewej: prof. Andrzej Pisowicz, ks. Józef Kowalczyk i Adam Terlecki (1991)

Հայ մշակութային ընկերություն կրակովում, ձախից՝ պրոֆ. Անջեյ Պիսովիչ, հոգեւորական Յոզեֆ Կովալչիկ և Ադամ Տերլեցկի (1991)

– W swoim życiorysie może się Pan poszczycić też pracą w Ambasadzie Polskiej w Teheranie. W jakich okolicznościach zajął się Pan dyplomacją?

– Kiedy po upadku Związku Radzieckiego powstała niepodległa Armenia wpadłem na pomysł, że mógłbym – podobnie jak wielu innych naukowców – pracować w dyplomacji. Zwróciłem się do Ministerstwa Spraw Zagranicznych w Warszawie oferując swoje usługi, gdyby w Armenii organizowano polską placówkę dyplomatyczną. Napisałem, że znam miejscowy język, a Ormianie bardzo wysoko cenią jak cudzoziemiec posługuje się ich językiem. Otrzymałem odpowiedź, że w najbliższych latach nie planuje się powołania placówki dyplomatycznej w Erywaniu. W wysłanym formularzu zaznaczyłem też, że znam język perski. W ten sposób zaproponowano mi pracę w Ambasadzie RP w Iranie. Skorzystałem z tej propozycji, odbyłem półroczny kurs dyplomacji i pojechałem do Teheranu, gdzie objąłem posadę radcy. Po pewnym czasie z powodów zdrowotnych, zrezygnowałem jednak z tej pracy i wróciłem do pracy naukowej na Uniwersytecie Jagiellońskim.

– Pana prace zwłaszcza *Gramatyka języka ormiańskiego* i *Mały słownik języka ormiańskiego* są bardzo ważne dla badań armenistycznych i ich popularyzacji. Proszę opowiedzieć o okolicznościach ich powstania.

– Pod koniec lat dziewięćdziesiątych w rozmowie z moimi przełożonymi na uniwersytecie omawialiśmy temat mojej profesury. Zaproponowałem wówczas opracowanie gramatyki języka ormiańskiego. Wówczas profesor Kazimierz Polański, który był wybitnym językoznawcą, zachęcił mnie do tej pracy mówiąc, że dobrze opracowana gramatyka może być podstawą uzyskania tytułu profesora. W książce opisałem strukturę gramatyczną grabaru oraz współczesnego języka ormiańskiego we wschodniej i zachodniej wersji. Książkę

– հնստունական թվականների վերջերին համալսարանում իմ ղեկավարների հետ գրույցների ընթացքում քննարկում էինք իմ պրոֆեսորական կոչման թեման: Այդ ժամանակ առաջարկեցի մշակել հայոց լեզվի քերականություն: Այն ժամանակ պրոֆեսոր Կազիմեժ Պոլյանսկին, որը նշանավոր լեզվաբան էր, խրախուսեց ինձ շարունակել այդ աշխատանքը՝ ասելով, որ լավ մշակված քերականությունը կարող է հիմք հանդիսանալ պրոֆեսորի կոչում ստանալու համար: Գրքում նկարագրել եմ գրաբարի քերականական կառուցվածքը, ինչպես նաև ժամանակակից հայոց լեզուն՝ արևելյան և արևմտյան տարբերակներով: Գիրքը նվիրել եմ լեհահայերին՝ Հայաստանի քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առիթով:



Spotkanie premiera Armenii Andranika Margariana z kardynałem Franciszkiem Macharskim, Kraków (2005)

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հանդիպումը կարդինալ Ֆրանցիշկեյ Մախարսկու հետ, Կրակով (2005)

հնչ վերաբերում է հայերեն բառարանին, ապա դա իմ գաղափարը չէր: Վարչավայում Նորաբնակ հայերի շրջանում կար Շուշանիկ Սեդոյանը, որը առաջարկեց, որ օգտակար կլիներ ունենալ հայերեն բառարան, հատկապես այն հայերի համար, որոնք գալիս էին Լեհաստան: Նա կապ հաստատեց ինձ հետ և առաջարկեց համագործակցել բառարանի խմբագրման գործում: Ես համաձայնեցի, և մենք հրավիրեցինք նաև Գդանսկից մի հայի՝ պրոֆեսոր Նորայր Տեր-Գրիգորյանին: Այդ բառարանում ես նաև ներառեցի հայերենի քերականության ուրվագիծ:

– Հարգարժան պրոֆեսոր, ընդհանրապես ինչպե՞ս են կազմվում բառարանները:

– Հիմքը միշտ նախկինում հրատարակված բառարան է լինում: Պետք է հաշվի առնել նախատեսվող բառարանի ծավալը և այն ընդունել որպես նմուշ: Ես հիմնականում օգտվել եմ հայերեն-ռուսերեն բառարանից՝ ընտրելով ամենակարևոր բառապաշարը:

– Դուք բազմիցս մեկնաբանել եք հայ-ադրբեջանական բարդ հարաբերությունները: Ճշմարտությունն

dedykowałem Ormianom polskim z okazji 1700-lecia chrztu Armenii.

Jeśli chodzi o słownik ormiański to nie był mój pomysł. W Warszawie wśród nowych Ormian znalazła się Szuszanik Sedojan, która zasugerowała mi, że przydałby się słownik ormiański zwłaszcza dla Ormian, którzy przyjeżdżali do Polski. Nawiązała ze mną kontakt i zaproponowała współpracę przy redakcji słownika. Ja się zgodziłem i doprosiliśmy jeszcze Ormianina z Gdańska profesora Norajra Ter-Grigoriana. Dołączyłem do tego słownika jeszcze zarys gramatyki ormiańskiej.

- Panie Profesorze, jak w ogóle tworzy się słowniki?

- Zawsze podstawą jest jakiś słownik już wydany. Trzeba wziąć pod uwagę objętość planowanego słownika i przyjąć jako wzór. Ja korzystałem głównie ze słownika ormiańsko-rosyjskiego wybierając najważniejsze słownictwo.

- Wiele razy komentował Pan trudne relacje ormiańsko-azerbejdżańskie. Za mówienie prawdy spotkały Pana szykany ze strony Ambasady Azerbejdżanu.

- We wrześniu 2011 roku brałem udział w debacie „Armenia – Azerbejdżan” zorganizowanej w Bibliotece Publicznej w Warszawie. Po tym wydarzeniu otrzymałem telefon z Ambasady Azerbejdżanu, że ambasador Hasan Hasanow chce ze mną porozmawiać. Z ambasadorem spotkaliśmy się na Uniwersytecie Jagiellońskim 26 października. Przybył ze swoim współpracownikiem, a ja byłem sam. Nie miałem świadka, byłem w gorszej sytuacji, ale nie przypuszczałem, że będzie to taka ostra rozmowa. Jak się szybko domyśliłem chodziło o moje wypowiedzi z debaty w Warszawie. Na tym spotkaniu był najwyraźniej jakiś szpieg azerbejdżański, który go poinformował co mówiłem. Moje wypowiedzi uznał za obraźliwe dla narodu azerbejdżańskiego, bo



Prof. Andrzej Pisowicz i dr Tomasz Krzyżowski (2020)

Պրոֆեսոր Անջէյ Պիսովիչը և դոկտոր Թոմաշ Կրիշովսկին (2020)

ասելու համար Ադրբեջանի դեսպանատան կողմից ենթարկվել եք ճնշումների:

